

ՅԵՐԵՎԱՆԻ ԱԴՐԵՆԱԼԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

№ 3 ԳԵՂԱ - ԳՈՎՈՒԵԼ ՅՈՒԹ ՍԵՐԻԱՆ Ն 3

Ա. ՄՈՎՈՔՈՅՑԻՆ

ԱԿՆԱՐԿ ՀԻՆ ՀԱՅԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ

ՀՀ

37  
Բ-91

ԹԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՍՏԱՐԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1939

ՅԵՐԵՎԱՆԻ ՊԵՏՈՎԱԿԱՆ ՀԱՄԱԼՍՈՒՐՈՒ

№ 3 ԳԻՏՈ-ՊՐՊԱԼՅԱԾՈՐ ՍԵՐԻԱ. № 3

37  
8-91

Ա. ՄՈՎՈՒՑՈՂՆ

ՎԿ

ԱԿՆԱՐԿ ՀԻՆ ՀԱՅԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ

Տ/Հ  
62

ԹԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍՈՒՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1939

04.07.2013

44.673

LJ MAR 2010

## ԱԿՆԱԲԿ ՀԻՆ ՀԱՅԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայ ժողովրդի կուլտուրայի հարուստ պատմության մեջ փոքր տեղ չի բռնում այդ ժողովրդի դաստիարակության և կրթության գործը:

Սակայն մեր գրականության մեջ շատ քիչ են մշակված այդ հարցերը, իսկ յեղած ուսումնասիրություններն ել շատ թերի յեն ու միակողմանի: Ուսումնասիրողներից վոմանք, հենվելով մեկ կամ մի քանի պատմիչների առանձին արտահայտությունների վրա, անհիմն կերպով յեզրակացրել են, վոր իբր թե հայերը գեպի ուսման և կրթության գործը «անտարբեր են յեղել»:

Նրանցից մի քանիսը գանում են, վոր 5-րդ դարից հետո հայերը չեն ունեցել մասսայական ժողովրդական տիպի դպրոցներ և յեղածներն ել վանքերին կից լինելով՝ զուտ վանականնողներական տիպի դպրոցներ եյին, վորոնց պահպանության նախապատվությունը վերագրվել ե ամբողջապես հոգևորականությանը: Դուրս ե գալիս, վոր 5-րդ դարից հետո ժողովուրդը և պետությունը հայ պարոցների նկատմամբ յեղել են անտարբեր:

Դպրոցի ժողովրդական լինելը չի վորոշվում նրա վայրով, — վանքումն ե, թե վանքից դուրս, պետական ե, թե ծխական, այլ իր բովանդակությամբ, աշակերտների կազմով, իր մասսայական բնույթով: Փաստը այն ե, վոր միջին դարերի հայ մասսայական դպրոցները ծխական տիպի դպրոցներն եյին, վորոնք սակայն վոչ միայն յեկեղեցիներին, այլև վանքերին կից եյին:

Վանքերի մեջ պատապարած դպրոցները, այդ ուսումնասիրողների կարծիքով, ձեռք քաշեցին արտաքին գիտություններից ու սկսեցին զրագիւլ միայն Ավետարանի, չին և նոր Կտակարանների մեկնություններով:

Հայ հին կրթության և դաստիարակության մասին նման



6319  
39

կարծիքները վոչ մի հիմք չունեն և թանձր քողի տակ են պահում մեր ժողովրդի վարած պայքարը հենց իր կրթության ու դաստիարակության գործի համար:

Փաստերը ցույց են տալիս, վոր ֆեռդալական պետության կողմից դպրոցական կրթության գործը հանձնվեց հոգեորականությանը և սկզբում քրիստոնեությունն ավելի ամրապնդելու նպատակով դպրոցները մղվեցին գեղի վանքերը, իսկ հետագայում՝ մշտական պատերազմների արհավիրքի հետևանքով, այդ դպրոցներն ավելի յերկար ժամանակով մնացին վանքերի չորս պատերի մեջ: Սակայն վանքերում յեղած նախկին ժողովրդական դպրոցները ամբողջապես չկորցրին իրենց դեմքը, չլերածվեցին ամբողջապես հոգեոր կադրեր պատրաստող հիմնարկների: Այդ դպրոցներից շատերի մեջ մնացին ժողովրդական դպրոցի վորոշ հատկություններ:

Վոր դպրոցների զգալի մասը վանքերին կից ե յեղել՝ այդ ժխտել չի կարելի, բայց անհնար և պատկերացնել պետության ազգեցությունից գուրս դպրոց: Վոր այդ դպրոցներում անցնում եյին կրօնական գիտելիքներ՝ այդ ժխտել չի կարելի, բայց մոռանալ յեղած բազմաթիվ վկայությունները, վոր այդ դպրոցներում դասավանդվում եյին զանազան այլ մոռարկաներ, ուսուցանում եյին արտաքին գիտություններ՝ այդ ևս չի կարելի ժխտել: Վանքին կից, վանքի բակում կամ նրա սահմաններում գտնվող դպրոցները պահպան եյին նախ և առաջ ժողովրդի միջոցներով, զանազան առիթներով հավաքված նվիրատվություններով և հարկերով:

Բացի այդ դպրոցներից, հայերն ունեցել են զանազան այլ տիպի դպրոցներ՝ առանձնական, մասնավոր, տնային դպրոցներ, վորոնց քանակը, ինչպես ցույց են տալիս բազմաթիվ վկայությունները, մեծ ե յեղել:

Միջին գարերում հայերն ունեցել են զանազան վայրերում պետական, իրենց բովանդակությամբ աշխարհիկ դպրոցներ: Այստեղ վորոշ չափով ընդունում եյին նաև աշխատավոր խավի յերեխաններին: Նույնիսկ կան մի քանի տեղեկություններ աղջիկների դպրոցական կրթության մասին:

## ԴՐՈՑՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հին հայերի դպրոցական ձևի կրթության մասսայական ընույթը սկզբում ե դեռ 4-րդ դարից: Մինչ այդ հայ արքաներն ու իշխանները, նախարարներն ու զինվորականները, մասամբ և ազատները, իրենց վորդիներին ուղարկում եյին Հունատան, Ասորեստան, Պարսկաստան, ինչպես և հետագայում Հունա ուսում առնելու համար:

Տառերի գյուտից առաջ հայերը հայաստանում սովորում եյին հունական և ասորական լեզուներով: Պետք ե յենթադրել՝ նաև հայերեն լեզվով:

Ազաթանգեղոսը վկայում ե, վոր դեռ 4-րդ դարից սկզբում ե դպրոցների հիմնադրումը՝

«Զի ի գաւառաց գաւառաց և կողմանց կողմանց ի տեղիս տեղիս ժողովեցեն բազմութիւն մանկուոյ, առ ի նիւթվարդակութեան, զգազանամիտ զվարենագոյն գճիւազաբարոյ զաշխարհաբնակոն»:

(Ազաթ. Պատմ. Հայոց եջ 437. Տփխիս 1909 թ.)

Մինչ այդ, գլխավորապես բարձր խավերի յերեխանները իրենց կրթությունը ստանում եյին առանձնական կամ տնային դաստիարակության միջոցով: Նրանց դաստիարակները շատ դեպքում վոչ ազնվական, վոչ հոգեօրական խավերից եյին լինում:

Այդ դաստիարակները վոչ միայն լեզուներ և վորոշ գիտություններ եյին ուսուցանում, այլև զեկավարում եյին մանուկների փիզիկական դաստիարակության գործը:

Նրանք վարժեցնում եյին յերեխաններին նետ ու աղեղի գործածության, նիզակահարության, մկունդի նետման, պարաւըկաձգության, սրախաղության, ձիավարժության և այլ խաղերի:

Չորրորդ դարի դպրոցներում ընդգրկվում եյին յերեխին վոչ ազնվականների, յերեխանները, հատկապես քրիստոնեություն տարածելու նպատակով, ընդգրկում եյին՝ «յարժանաւոր տեղիս դասս դասս», ինչպես ասում է Սգաթանցեղոսը: Այդ դպրոցները պահպան եյին պետության և ժողովրդի միջոցներով: Ուսուցիչների ստացած աշխատավարձը կոչվում եր «գարման ոսկեց», բացի քարոզչական առարկաներից, նրանք սովորեցնում եյին լիզուներ և «դպրութեան արաւեսր», վորը նշանակում ե գրագիտություն:

Աւսուցիչներից՝ «Զոմանս յասորի դպրութիւն կարգեալ եւ զոմանս ի հելէն»: (Ագաթանգ., Էջ 438):

Փափառում գրում ե՝

«Կարգէր և ի տեղիս տեղիս դպրոցս յունարէն և ասուրէն՝ յամենայն գաւառս հայոց»:

Տառերի գյուտից հետո հիմնադրվում են հայկական դրագիտական դպրոցներ, կամ ինչպես ասում են՝ «հայտիպ դպրոցներ», այստեղից ել սկսվում ե մասսայական ուսուցումը հայերեն լեզվով:

Մ. Խորենացին ասում ե, թե ինչպիսի աշակերտներ եյին ընտրում այդ դպրոցների համար.

«Ընտրեալս՝ ուշեղս և քաջասունս (այսինքն պերձախոս), փափկածայնս և երկարողիս»: (Խոր. Պ. ծդ):

Աշակերտների այսպիսի ընտրություն կատարվում եր շատ դպրոցներում (Խորենացի Պ. ծդ):

Ղազար Փարտեցին դպրոցների մասին ուղղակի ասում ե՝ «դպրոցի հօտին ուսմանց», ուրիշ խոսքով սրանք այդ ժամանակի ժողովրդական դպրոցներն եյին:

Սակայն տեղերի, իշխողների և հոգևորականության կողմից այդ դպրոցների գաղափարական և քաղաքական կողմը կանխորոշված եր:

Մենք ասացինք, վոր այդ դպրոցի խնդիրն եր՝ մի կողմից քրիստոնեության տարածումը, իսկ մյուս կողմից ժողովրդի միջից իրենց համար հրու հնազանդ կագրերի ստեղծումը:

Բուրժուական և ընդհանրապես հին դպրոցի մասին խոսելիս հանձարեղ լենինն ասում եր, վոր միշտ ել դպրոցը գասակարգային և յեղել:

«Բնական ե, վար հին դպրոցը ամբողջուրյամբ ծծված լինելով դասակարգային փառվ, միայն բուրժուազիայի յերեխաներին եր գիտարյուն տալիս: Նրա յուրաքանչյուր բառը հարինված եր բուրժուազիայի շահերը հաշվի տոնելով»:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի ուսումնական հիմնարկը, ինչպես վկայում են Ագաթանգեղոսը, Փափառում, Խորենացին և Փարտեցին, կոչվում եր դպրոց, իսկ ավելի ուշ կոչվում եր վարժարան, դասատուն, դպրոցատուն և այլն:

Դպրոցատների մասին Կաղանկատվացին հիշում ե, վոր դպրապետ «նստեալ ի դպրոցատնն... բակ առեալ բազմութեան յոյժ», նա սովորողներին գրվածքներ ու գրքեր եր տալիս, իսկ վոճանց ել պնակիտներ և հրամայում եր նրանց «մեծաձայն կարգալ»:

Այդ դպրոցներում անցնում եյին զանազան հանրակրթական առարկաներ, ինչպես՝ գրանանաչություն, մայրենի և ստար լեզուներ, յերգեցողություն և թվարանություն: Գործադրվում եյին ուսուցման վորոշ մեթոդներ, «տալոյ զուսումն» և «համարս տալոյ», այսուհետեւ դպրապետը սկսում եր զասի հարցումը և ստուգումը, ինչպես վերը հանդիպեցինք՝ «մեծաձայն կարգալ» մեթոդներ, այնպիս ել այստեղ՝

«Խնդրեալ գամարս» և «ցան աստ, ցան անդ հարցանէին, պահանջէին»: (Խոր. Մաթ. 168):

Միջնադարի սխոլաստիկ մեթոդից սա շատ առավել կողմեր ունի, թեկուղ և այն, վոր աշակերտներից և վոչ մեկը չգիտեր, թե ով այսոր պետք և պատասխաններ դասը և վազը ումից և հարցնելու ուսուցիչը: Քանի վոր աշակերտը չգիտեր, թե յերբ և ուսուցիչը իրենից հարցնելու, բայց գիտեր, վոր ամեն ըստեն կարող և հարցնել ուստի նա դաս պատասխաննելու համար միշտ պատրաստ պետք և լիներ: Դաս չպատասխանող աշակերտը շատ թանգ եր հատուցում, նա անպայման պետք և ծեծվեր՝ «զան ըսպէր»:

Այսպես, 4-րդ և 5-րդ դարերում առաջացած դպրոցական կրթության ծավալումը սկսում է գանդաղել կամաց-կամաց, ժողովրդից մեջ յեղած դպրոցը սկսում են քաշել գեղի վանքը: Մյուս կողմից հեթանոսական շրջանի հայերի սովորության մեջ յեղած մարզական խաղերն ու վարժությունները, հանդիպած ուսմանը վիճերն ու յեղանակները գատապարտվում են:

Հին հեթանոս հայերը մասսայաբար սովորում եյին մարզանքներ, նրանք վարժվում եյին գենք բանեցնելու մեջ, հաշվի առնելով մշտական պատերազմների արհավիրքը: Դրավոր խոսքի բացակայության հետևանքով հայերի կյանքը արտահայտվում եր բանավոր խոսքի, յերգերի, դյուցազնական զրույցների, բարոյական առածների ու ասացվածների մեջ:

Վիպասանները բամբիուը ձեռներին յերգում եյին, պատմում եյին գեղեցիկ զրույցներ արիության, հերոսության մասին, գովերգում եյին զյուցազների սխրագործությունները և վոգեորում յերիտասարդներին ու պատանեկությանը:

Հանդիսական ուսմունքն եր այդ ժամանակվա դպրոցը, վորը տեղի յեր ունենում հրապարակներում, ասպարեզներում, թատրոնական խաղերում: «Խաղերն ի թատերին, ձիավարժն ի թատերին»: Քրիստոնեության պաշտօնյաները խեցին ժողովրդից

այդ կրթության տարրերը, վորովհետև գրանք չելին համապատասխանում նոր կրօնի սկզբունքներին:

Այսուհետև «հանդիսական» ուսմունքի՝ գլխավոր վայրը դառնում է մենաստանը, վանքն ու յեկեղեցին: Վիպասանին փոխարժնում է քարոզիչը, բամբիոին ու քնարին՝ յեկեղեցական ժամասացությունը:

\* \* \*

†

Արժե մի ընդհանուր ակնարկ գցել հետագա դարերի հայոց կրթության սիստեմի և նրա բովանդակության վրա:

Այս շրջանում խոսք չեր կարող լինել կրթության մի ընդհանուր սիստեմի մասին: Այդ ժամանակաշրջանի պատմիչների վկայության համաձայն կարող ենք ասել, վոր յեղել են բազմաթիվ վանական դպրոցներ, դպրոցներ մենաստաններում, անհատական տնային, առանի, առանձնական դպրոցներ և առանձին «դպրատներ»:

Այս ժամանակաշրջանում մենք հանդիպում ենք հատ ու կենտ դպրոցների, վորոնք իրենց թե ձեռվ և թե ներքին բովանդակությամբ զգալի չափով տարբերվում են վերը հիշված դպրոցներից: Դրանք իրենց բնույթով կարող են լինել հետագա ժողովրդական, ծխական դպրոցների նախատիպերը: Կրթությունը վորոշ չափով սկսում է մուտք գործել և ժողովրդի մեջ՝

«Քանդի ամենայն անձն յորդորեալ փափաքէր յուսումն...»:

Ասոցիկը հիշում է, վոր դպրոցներում անցնում եյին ձարապասնություն՝ :

«Զգասս ճարտասանիցն բազմացուցաներ» (Ասողիկ 83):

Ապա անցնում եյին ֆավիթ Անհաղթի «Սահմանք իմաստութեան», այսուհետև յերգն ու յերգեցողությունը, վորը խիստ հարգված եր, և «մարզանք ամենայն տեսակի»:

12-րդ դարում Ն. Շնորհալին գրում է իր «Խրատ ուսումնականաց մանկանց»-ը, վորտեղ բազմաթիվ հետաքրքիր տըկյալներ կան, վորոնք ապացուցում են մի կողմից «հօտին» համար յեղած դպրոցների գոյությունը և մյուս կողմից այդ դպրոցների ներքին բովանդակության մասին:

Նույն Շնորհալին իր «Բնդ. թուղթք»-ի մեջ հիշում է Լեոն թագավորի միջամտությունը և Տրամանը դպրոցների նկատմամբ,

կա և վերջինիս կողմից գասատու նշանակելու դեպքը, վորը հիշում է կրակացի Հակոբ վարժապետը:

«Աւու մեր վարժարանք ի թագաւորական պատրաստեալ հրամանաց և կամ յոյս փառաց և պարզեած յառաջացելոցն յիմաստս»—գրում է Շնորհալին:

Սամվել Անեցին վկայում է՝ «Տուն կարգեաց վարդապետաց՝ վասն վարժելոյ զմանկունս», սա պարզ կերպով ցույց է տալիս, վոր դա վանական դպրոց չե, այլ աշխարհիկ դպրոց եւ:

«Ե այժմ գասատուն կարգեալ ի թագաւորէն հայոց Լեոնի և թագադրին և պայլին հայոց Աւշնի տեառն կոռիկոսա», —այդպես ե ասում 12-րդ դարի քերական Հակոբ վարժապետը: Յեթե հիշում են այսպես հատ ու կենտ դպրոցներ, վորոնք աշխարհիկ բնույթ ունեն, դա չի նշանակում, վոր այդ դպրոցներում սովորում եյին աշխատավորության յերեխաները: Ընդհակառակը, աշխատավորության յերեխաներից շատ քչերին եր հաջողվում այդ ժամանակ սովորել դպրոցներում, վորովհետև առաջին հերթին պետք է ընդունեյին իշխանների, ազատների և հոգկորականների յերեխաններին: Մյուս դժվարությունը այն եր, վոր սովորողների ծնողները բավականին մեծ ծախսեր պետք ե անել յին, վորը ամեն մի աշխատավորի ձեռնտու չեր:

Դպրոցական ցանցի այս նեղ պայմաններում, 12-րդ դարում, Մ. Գոշի «Դատաստանագրքի» մեջ կա աշապիսի մի կանոն՝

«Յաղագս գատաստանաց մանկանց ուսուցողաց»: Այս կանոնի մեջ ասվում է՝ «ոչ ե պարտ վարձու զմանկունս ուսուցանել», այլ խոսքով՝ ուսուցումը ձրի պիտի լինի, իսկ վոմանց ել՝ «ըստ ինքեանց յօժարութեան ընծայ ուսուցողացն տացեն»:

Գոշի այս աեղեկությունը ձիշտ չի բացատրվել վոմանց կողմից: Նախ՝ մենք վերը տասցինք, վոր այդ ժամանակ ձայսատանում կրթական մի ընդհանուր սիստեմ գոյություն չուներ, հետեւաբար վոչ մի հիմք չկա Գոշի հիշատակած այդ կանոնը տարածելու յեղած բոլոր դպրոցների վրա: Յեթե վորոշ դպրոցների համար ընդունված կանոն եր «ոչ է պարտ վարձու զմանկանս ուսուցանել», ապա դա ամենեվին չի նշանակում, վոր այդ որենքը սահմանված եր չքավորների յերեխանների համար, քանի վոր չքավորների յերեխաններից շատ քչերն եյին սովորում այդ ժամանակվա դպրոցներում: Գոշի հիշած կանոնի մյուս մասը, դա սովորովի կողմից հոժարակամ նվերն եր ուսուցչին, վո-

ըը վոչ այլ ինչ եր, յեթե վոչ այդ ժամանակվա ուսուցչի աշխատավարձը և ըստ յերեւյթին ավելի ձեռնտու յե յեղել «յօժարութեան ընծան»:

Գոշը հիշում ե, վոր այդ ժամանակ մի շարք դպրոցներ կային Գանձակի կողմերը, վորոնց իշխում եյին «Հաթերք դղեկի զորավոր տեարքը»: Այսուհետեւ մի քանի աղբյուրներից տեղեկանում ենք, վոր Ագուլիսումն ել «հաստատեցին դպրատուն», ինչպես և նրա շրջակա «Գեղօրէիցն, անդր ժողովեսցին մանկունք առ ի յուսումն»:

Հայոց պատմության մեջ հայտնի յեն նաև առանձին, մասնավոր կամ տնային տիպի դպրոցներ, վորոնց մի մասը հոգեուրականների, իսկ մյուս մասը աշխարհական մարդկանց ձեռքում ե գանվելիս յեղել: Սահակառուխտ Այունեցին (Թառնո Չորում) Մասուկներին ուսուցանում եր յերաժշտություն, սա «յոյժ հմուտ էր երաժշտական արհեստին», ինչպես վկայում ե պատմիչը:

Գրիգոր Մագիստրոսը գրում ե, վոր Պահապունին և իր կին Շուշանը «ուսուցանեն զմանկունս բաղում»:

Այրաբատի Արկոսեցի Գրիգորը վկայում ե, վոր ինքը և իր յեղբայրը շատերի հետ միասին սովորել են Փիլիպպոսի և վերջինիս վորդիների մոտ:

Ներսես Շնորհալին վկայում ե, վոր իր ժամանակ հազվագյուտ են յեղել հասարակական դպրոցներ, իսկ տնային դպրոցներ ավելի շատ, նա հորդորում եր յերեխաններին ուսումը սիրել և «իմաստնոց տները» գնալ.

Այլ յիմաստանոց տունը գընալ  
եւ յուսումնե ոչ ձանձրանալ»:

Այս դպրոցներում յեղել ե ուսուցան վորոշ կարգ, ուսուցանելու յեղանակներ ու սովորություններ, վորոնց մասին հիշում են ժամանակակից մի շարք պատմիչները:

Այսպիսի դպրոցների մասին կա հիշատակություն և Վարդանի մոտ: Ստեփանոս Կրակեցին վկայում ե, վոր ինքը մի դպրոց ուներ Կիլիկիայում:

Մովսես Յերզնկացու «Խրատք»-ի մեջ կա մի այսպիսի հիշատակություն. «Զտղայն յորթամ եօթն ամաց լինի, յուսումն տար»:

Անշուշտ շատ ուշագրավ ե դպրոցականի այս տարիքը, սակայն մենք վերը արդեն ասինք, վոր այսպիսի բացառիկ բաները

չպետք ե զարմանք պատճառեն: Այսպիսի գեպքերում պետք ե հաշվի առնել հետեւյալը, վոր յեթե դպրոցական մի ընդհանուր սիստեմ գոյություն չունի, ապա հիշված կանոնները չեյին կարող պարտադիր լինել բոլոր դպրոցների համար:

Դուցի Յերզնկացին նկատի ունի մի նեղ շրջան, ուր ընդունված ե յեղել Դ-ը տարեկանից ուսման տալու սովորությունը, գուցե նա խոսում ե մի գյուղի, մի քաղաքի կամ մի քանի դպրոցների ընդունման կանոնի մասին, զուցե դա ցանկություն ե, վոր անկախ կիրառելու հնարավորությունից, որինականացնել են ցանկացել նրանք, ոկերը այդ ժամանակի լավագույն մտածողներ են յեղել: Այսպես անվերջ գուցեներ կլինեն, յեթե մենք այդ ձեռվ մտածենք: Հիմնականը այն ե, վոր այդ ժամանակի ինչպես հայաստանում, այնպես ել Հայաստանի հարևան յերկրներում ընդունված եր աղնվականների և հոգեուրականների յերեխաններին ավելի վաղ շրջանից ուսման տալու պրակտիկան: Անշուշտ այս ուսումը չպետք ե հասկանալ անպայման մտավոր կրթությամբ սկսվող մի բան, այլ և այն, վոր յերեխանները վարժվում եյին ֆիզիկապես և ձեռք եյին բերում զանազան ուսակություններ:

Ամենահավանականը այն ե, վոր Յերզնկացու՝ «Զտղայն եօթն ամաց լինի, յուսումն տար» վերաբերվում ե իր ժամանակի աղնվականությանն ու հոգեուրականությանը:

Այս կարգի դպրոցների մասին կան մի քանի. հիշատակություններ, վորոնք ցույց են տալիս նրանց ներքին կանոնները, աշակերտների և ուսուցիչների փոխհարաբերությունը, ուսուցիչներին վարձատերելու կարգը և վորոշ մեթոդների գործադրությունը: Դասի ժամանակ աշակերտները սովորաբար ծնկած նըստում եյին իրենց վոտների վրա, իսկ ձեռքերը զնում եյին ծընկաներին, կամ կրծքին խաչածե արած: Տառաձնաչության, թվաբարձարելու կարգը և վորոշ առարկաների գասատվության ժամանակ, յերբ պահանջվում ե վորեն բան դիտել աշակերտները պետք ե գլուխները բարձր պահեցին և տեսնեցին ուսուցչին, նրա ցույց տրվելիք այն առարկաները, վորոնք հանդիսանում եյին ուսումնական նյութ, չնայած այսպիսի մեթոդներն ու պարագաները աննշան չափով եյին գործադրվում մեր հիշած դպրոցներում: Իսկ այն ժամանակ, յերբ ուսուցիչը «Խրատք» եր կարգում, կամ «Խոսք ասեր ունկնդրաց», աշակերտները պետք ե գլուխները կախեցին, խոնարհեցնեցին վար և այդպես լսեցին:

Միկթար Գոշի առավելագույն մեկը շատ ցայտուն կերպով  
ցույց է տալիս ուսուցանելու այդ սովորությունը: Առակն ասում  
ե, զոր փեղը իր վորդուն ուղարկում և Պլատոնի մոտ ուսանելու,  
իսկ Պլատոնը նրան, փղի ձագին, առաջարկում ե՝

«Գիլ ի լսարանին և նա ոչ կարէր, ապա ասաց նմա  
զգլուխն խոնարհեցուցանել երկիր և զայն ևս ոչ կարաց»:  
Այս փորձերից հետո Պլատոնը հորն և վերադարձնում ձագին՝  
«Զի ոչ նստիլ կարէ և ոչ զգլուխն խոնարհեցուցաներ»:

(Մ. Գոշ—առակը.):

Այդ զգլուխներում աշակերտները գրում եյին պնակիտի  
վրա (ներկած տախտակ), յեթե պնակետը սև եր, գրվում եր  
կավիճով, կրի կտորներով, իսկ սպիտակ տախտակի վրա գրում  
եյին ածուխով: Իսկ հետագայում պնակիտը պատրաստում եյին  
սև, հատուկ շերտավոր քարից, վորը կոչվում եր «քարէ տախ-  
տակ», և սրա վրա գրում եյին մի տեսակ փիլուն քարե մատի-  
տով: Այդ մասին բաղմաթիվ հիշատակութուն կա Յերգնկացու և  
Շնորհալու մոտ.

«Որպես մանկունք ուսման գրոյ  
ըզտախտակին համար տալոյ».

Կամ

«Հայեաց, ասէ, մանուկ և տես՝  
Զինչ ի տախտակը գըծագրես»:  
(Շնորհալի—«Բանք չափաւ»):

Շատ գեղքում այդ տախտակի վրա կատարած աշխատան-  
քով եր վորոշվում աշակերտի լավ ու վատ լինելը: Հովհ. Սար-  
կավագը մի առիթով այս յերեւոյթը այլաբանորեն այսպես և հի-  
շում.

«Ո՞ և զգմնղակապէս զծագրեալ ի տախտակս ոգոցն  
զվատթար և զամօթալից գիծոն լուսացէ մեզ, առ ի  
լաւագունի և գեղեցիկի ընդունելութեան գրոյ»:

Ակած 12-րդ դարից մինչև 19-րդ դարի վերջերը հայ աշա-  
կերտների գրավոր աշխատանքի մասսայական միջոցներից մեկը  
պնակիտն և յեղել: Թսակիտը անցք ուներ, աշակերտները թերով  
կախում եյին իրենց պարանոցից, գրելու ժամանակ պնակիտի մի  
ծայրը սեղմում եյին կըծքին, իսկ մյուս ծայրը հննում եյին ձախ-  
ձեռքին և աջով գրում:

Աշակերտի վղից կախված պնակիտը Շնորհալին համեմա-  
տում. և վոսկեղեն վղնոցի հետ

«Քիմըն՝ գանձէ քեզ բյուր բարի,  
Քրելով զիմաստս ի տախտակի.  
Զնա արկ ի քոյդ պարանոցի  
Որ պատուական է քան զոսկի»:

(Շնորհալի—«Բանք չափաւ» 342):

Քրավոր աշխատանքներին վորոշ չափով վարժվելուց հետո,  
աշակերտները սկսում եյին գրել մաղաղաթի (կատրների) վրա,  
հետագայում վորոշ չափով և թղթի վրա: Գրում եյին յեղեգնյա  
և փետուրե գրիչներով, իսկ թանաքը սև գույնի յեր, վորը կոչ-  
վում եր «տեղ» կամ սեատեղ: Այս գույնը շատ գործածական և  
յեղել. ներկել են իրեր, շորեղեն, աչքերի կոտերը և այլն: Այսու-  
հետեւ գործածվում եր սեղակը, մուրը, միջնադարում կոչվում  
եր սև թանաք կամ մելան: Բատ վըթանեսի, մի այլ թանաք  
կար, վորը պատրաստվում եր յերեք նյութից՝ «գեղ գրոց է ար-  
ջապար, գիտոր և կոփոր»:

Սովորաբար ուսուցիչներին վարծատրելու կարգը այսպես  
եր՝ ազնվականները իրենց տնային ուսուցիչներին պահում եյին  
տանը, տալիս եյին վորոշ միջոցներ նրա և իր ընտանիքի ապ-  
րուստի համար: Այս վարծատրությունը խիստ կամայական եր և  
վորեւ ընդհանուր կանոնի բերված չեր. ով վորքան կուգեր, այն-  
քան ել կվարձատրեր: Այս ուսուցիչները պալատում կամ ազնվա-  
կանի տանը հանդիսանում եյին յերեխաների բոլոր հարցերով  
զբաղվող մարդիկ. նրանք և՛ դասատու եյին և՛ դաստիարակ և՛  
ֆիզիկական վարժությունների ղեկավար և՛ ընդհանրապես խոր-  
հրդատուներ, մանկավարժներ և այլն:

Վանական զգլուխների զասատուները ապրում եյին վանքի  
յեկամուտներով, կրոնական հարկերի, ճնողների տված թոշակնե-  
րի, նվիրատվությունների և հանգանակությունների միջոցներով:  
Չմոռանանք, վոր վանական զգլուխների ուսուցիչները բոլորը  
համարյա հոգեսրականներ են յեղել վորոնք ոգտվում եյին վան-  
քի միջոցներից իրենց կարգին համապատասխան: Բոլորովին այլ  
եր ժողովրդական, գյուղական, զավառական աշխարհիկ զգլուխ-  
ների ուսուցիչների վիճակը: Այսուղ ուսուցիչը ոռձիկ չեր ստա-  
նում, «զարման ոռնկաց»-ը սրան չեր վերաբերում, նաև ստանում  
եր փայ, սահմանված հերթականությամբ աշակերտների ձեռքով  
ճնողները տնից ուղարկում եյին ճաշ, հաց, զանազան ուտելիք,  
նույնիսկ հագնելիք և այլն: Ուսուցիչը աշակերտի ձեռքով բերված

Նյութական միջոցներից չափում եր ամեն մի տան բարեհոգությունն ու խնամքը իր հանդեպ: Ուղիղ խոսքով ուսուցչի աշքը միշտ հառած եր աշակերտի ձեռքին: Այս ել բավական և վորոշեղակացության դալու համար այդ ժամանակվա ուսուցչի հեղինակաւթյան և տնտեսական վիճակի մասին:

Աղնվականների յերեխաների գաստիարակության գործում կար մի սովորություն, զա այն եր, վոր դեռ փոքրիկ հասակից, ուսման հետ զուգընթաց, նրանք վարժվում եյին գործնական հանձնարարություններ և պարտականություններ կատարելու մեջ: Արինակ՝ նախքան ինքնուրույն վորսորդ լինելը, նրանք «նախ շանց և թռչնոց սպասաւորելը, այսինքն վորսկան բարակներին և բազեներին խնամելը, ապա «յետ այնը կրթելոյ... յոտնկայ սպասաւորութիւն»: Այս ամենից հետո պատանին դառնում ե կապարճակիր, վորսորդի կամ ձիավորի թիկնապահ, այնուհետեւ ինքնուրույն, ինչպես ասում ե լամբրոնացին՝ «հաստկան կատարելոյ, ապա լինի ձիավոր»:

Բազրատունյաց շրջանում հայտնի յեն յեղել մի շարք պարոցներ: Կան մի քանի տեղեկություններ, վոր առանձնապես Գաւղիկ Բագրատունին հնաւեռում եր կրթության գործին, վորովհետև նա՝ «ի մանկութենէ դպրութեամբ զրոց վարժեալ էր և ի նոսին զբօնոյր և ի տերութեան աւուրս»: Այս ժամանակաշրջանում Հայաստանի մի շարք վայրերում հատկապես ծավալվում ե դրագիտությունը, առանձին դեպքերում հիշվում ե՝ «մինչև կանայքն ևս զրէին եւ ընթեռնուին»:

Սակայն այս ամենի կողքին կան փաստեր, թե ինչպես հենց իրենք հոգեսրականները արգելք եյին հանդիսանում գրագիտության ու կրթության ծավալման գործին: Դվինի ժողովը պահանջում եր, վոր հոգեսրականները իրենց վորդիներին կըրթություն տան, այդ ժողովը ասում եր՝ «զմանկունս ուխտին ի դպրոց ոչ տացէ»:

Սյունյաց պատմիչ Որբելյանը և վոչ մի լավագույն հատկությունից չի զրկում իր տոհմին, շաւայլ չափազանցություններով զարդարում ե ամեն մի սյունեցու ձակատը: Ստեփանոսը վկայում ե, վոր Սյունյաց վարդապետական աթոռին եր վերապահվում թարգմանել և մելինել «զգիրս»: «Պայծառացեալ դըպրոցքն որ ի նմա», — համեմատում ե նա Սյունյաց դպրոցները Աթենքի դպրոցի հետ (Որբ. 18, 82, 97):

Նույն պատմիչը հիշում ե, վոր Սյունյաց դպրոցներում սովորեցնում եյին քերթողություն, ճարտասանություն, փիլիսոփայություն, գիրս յերաժշտության և այլն: Սակայն Սյունյաց ամենանշանավոր դպրոցը դա Տաթևի դպրոցն եր, վորը հիմնադրվեց 895 թ., ուր սովորում եյին բազմաթիվ աշակերտներ: «Ճոխ եր և վարժարանն վարդապետական կրթութեամբն», — այստեղ սովորում եյին յերգեցողություն, վորը լի եր «Ճոխամատոյց փիլսոփայիւք (յերգիչ) յերաժշտական երգոց»: Այստեղ ուսուցանում եյին և գեղագրություն, պատրաստում եյին և «գրագիր յոյժ հմուտ» մարդիկ, այսինքն գեղեցիկ ձեռագիր ուշնեցողներ: Ուսուցանվում եր այստեղ և նկարչությունն ու գըրչությունը՝ պատրաստվում եյին «նաեւ արհեստավորք նկարչացն և գրողաց անհամեմատք»:

Տաթևումն են սովորել Հովհան Վորոտնեցին, Գրիգոր Տաթևացին, Թովմաս Մեծովեցին և ուրիները, այսպես են վկայում Ստ. Որբելյանը, Ասողիկը և Նարեկացին:

10-րդ դարում հիշվում ե Նարեկա վանքի (Մշտունյաց) դպրոցը՝ «Բազմամարդ յերգեցողովք և գրական գիտողոք»: Այդ նույն ժամանակ հայոց դպրության ասպարիզում յերեացին մի շարք նշանավոր գեմքեր՝ «մտավարժ փիլիսոփայ» Անանիա Շիրակացին, կամ ինչպես Մագիստրոսն և ասում՝ «գերազոյն փիլիսոփայ», այնուհետև միջնադարի գեղեցիկ խոսքի ներկայացուցիչներից մեկը՝ Գրիգոր Նարեկացին, վոր ինքը իրեն վարժապետ եր կոչում:

12-րդ դարում Հաղարծինի մենաստանում Խաչատուր Տարոնացին «զըրեաց և ուսոյց բազմաց» — ինչպես հիշում ե Գանձակեցին: Սա միաժամանակ սովորեցնում եր լատիներեն լեզուն, ապա ինքը տարածում եր արեւելք յերգելը, վորովհետև, ինչպես վկայում ե նույն պատմիչը, Տարոնացին յեղել ե՝ «Գիտութեամբ հռչակեալ, մանաւանդ երաժշտական արուեստիւ»:

Նույն դարում Մ. Գոշը Գիտիկում հիմնեց «ուսումնարան», ուր «բազում եղբարք ժողովեցան վասն հոչականուն տեղվոյն, և բազմաց եղել տեղի սըննդեան և ուսման, ուր և մեք իսկ մնեալ և ուսեալ եղաք ի նոյն վանս» — ասում ե Գանձակեցին:

Այստեղ սովորելու մեծ ձգտում ե յեղել ասում ե նույն պատմիչը՝ «Բազումք գեգերէին առ նա ուսման աղագաւ»: Այդ վանքում հավաքում եյին զանազան գրքեր, գրականություն, կատարում եյին թարգմանություններ և այլն:

Կան տեղեկություններ, վոր ս. Մինաս անապատում կար գպրոց, ուր ուսուցիչ են յեղել իրենց ժամանակի նշանավոր քերականներ՝ Հովհան Յերզնկացին և հետո Մովսես Յերզնկացին։ Այդ նույն գավառի Ավագ մենաստանում գնում եյին մարդիկ ուսաման համար, հիշվում ե, վոր այստեղ կար հնարավորություն՝ «կանոնաւոր ուսմանց» (Ալիշան—Հայապատում):

Իր ժամանակին մեծ անուն ե ունեցել Գայլաճորում յեղած Նշեցու գպրոցը, ուր սովորում եյին 360 աշակերտ:

Բազմաթիվ վկայություններ կան Նշեցու մասին, վորպես բազմակողմանի գարզացած մարդու, վորը՝ «պերճապարդեալ էր վարդապետական արժանաւորութեամբ»։

Այդ նույն գպրոցը (1309 թ.) այսպես ե հիշվում. «Մեծ գպրատունս, որ կոչի Գալիձոր, ի վարժապետութեան մեծիս Եսայշեայ (Նշեցու) և եռամեծին Դաւթայ»։

Լատինական պատմագիր Կ. Գալիճորի գպրապետին անվանում ե իր ժամանակի «մեծանոշակ վարդապետ (ուսուցիչ) ի բոլոր հայս»։ Մի այլ պատմիչ Գալիճորի մասին ուղղակի ասում ե՝ «Համարձակիմ զատ կոչել երկրորդ Աթենս և մայրաքաղաք ամենայն իմաստից»։ Վոմանք Նշեցու և Գավթի գպրատունը «Համալսարան» են անվանում։ Ներսես Սասնեցին գրում ե. Գալիճորում «Եօթն ամ աշխատեցայ ի վարժումն հին և նոր տառից»։ (Ալիշան—Հայապ. 546):

Համոզված լինելով վերոհիշյալ տվյալների վորոշ մասի շռայլ գովասանք լինելուն, այսուամենայնիվ մենք յեղել ենք այն յեղբակացության, վոր Գալիճորը և մեր հիշած մյուս վայրերը այդ ժամանակներում յեղել են աչքի ընկնող ուսումնատեղեր։

Պատմագիր Թովմա Մեծոփեցին հիշում ե Հովհաննես Կախիկին վորպես «յերանելի վարժապետի», վորը ուներ գպրոց Ապրակունյաց մենաստանում։ Այդտեղ հավաքում եյին՝ «Բազում աշակերտու յամենայն գաւառաց»։ Նույն պատմիչը հիշում է Գր. Տաթեացուն, վորպես անվանի վարժապետի, վորը ուներ 80 աշակերտ։ Մեծոփեցին և Սյունյաց պատմիչ Որբելյանը հիշում են, վոր Տաթեացին ուսուցանում եր իր աշակերտներին՝ «զգիրս արտաքին իմաստամիրացն», ապա «գրչութեան արուեստ, զերիս գիրս մեկնեաց դասիւ», Պավղոսի թղթերը և այլ առարկաներ։

Թ. Մեծոփեցին՝ «երեսուն և հինգ ամ դաս ասելով ամենայն անձանց գրոց աշակերտելոց» սովորեցնում եր՝ «Ժամանակագրութիւն ու գրագրութիւն», ուրիշ խոսքով պատմություն և գրագիտություն, ինչպես և «գեղեցիկ գրութիւն»։ Հատկապես գեղեցիկ գրության հետ կապված կա հիշատակություն, վոր հնում աշակերտները «որինակելով հին գրքերը», սովորում եյին այդ գրքերի գրության ձևերը։

Արժե այս կապակցությամբ հիշատակել մի ուշագրավ յերկույթ. դա գեղեցիկ գրության արվեստն ե, վորը խիստ բնորոշ է յեղել միջնադարի հայ գալրոցներին և ուսումնական վայրերին։

Գրեթե առանց բացառության, թե վանական և թե ժողովրդական բոլոր գալրոցներում ուսուցանվել ե գեղեցիկ գրությունը կամ, ինչպես շատ գեպքում հիշվում ե՝ «գրուչութեան արւեստը»։

Շատ հասկանալի յե գեղեցիկ գրության ուսուցման պահանջը, զիր ունեցող ժողովրդին անհրաժեշտ եր գիրք—գրականություն, նույնը և գալրոցների համար։ Գեղեցիկ գրության հատուկ շկոլաներ եյին ստեղծվել տարիներ շարունակ մարդիկ սովորում եյին գեղեցիկ գրել յուրացնել «գրուչութեան արւեստը»։ Սրանցից վոմանք յեղել են, և գրողներ և նկարողներ, սրանց ավելի մատչելի յե յեղել տիրապետել գրչությանը, վորովհետեւ նկարչությունը խիստ նպաստում և ձեռագրի գեղեցկությանը։ Այսուհետեւ լավագույն ձեռագրերը տարածվել են և ուրիշները ընդուրինակել են գրանցից, այսպիսով ձեռագրերի լավ շկոլաները արագետող են յեղել։

Այս յերեսույթի լուս, սակայն պերճախոս վկաները հանդիսանում են մեր ունեցած տասնյակ հազարավոր ձեռագրերը՝ մագաղաթի և թղթի վրա։

Յերեսին տարերի դարերի ձեռագրերը դժվար ե իրարից տարերերի, նրանք այնքան նման են միմյանց իրենց գեղեցկութամբ ու գրերի միանմանությամբ, վոր կարծես մի մարդ գրած լինի։

Նույն Մեծոփեցին պատրաստեց «քսան և չորս ընտիր գրագիր», յեթե սրանց մի մասը առհասարակ գրագիրներ պետք է լինելուն պիտական կամ յեկեղեցական հաստատությունների մեջ, անդամանք մի մասն ել, վորոնք ունեյին գեղեցիկ գրություն՝ արտագրողներ եյին։ Սրանք թարգմանական և ինքնուրույն գրքերը պիտի բազմացնեյին, ապա «զարդարէին գեղեցիկ պատկե-

բօք»։ յեղած ձեռագրերից շատերը ապացույց են այս բանի։ Այս նույն ժամանակաշրջանում դպրոց և յեղել Յեղիվարդ գյուղում դպրոցի հիմնադիրն եր Սիմեոն Այրիվանեցին։ Սա կը ունական առարկաներին զուգընթաց ուսուցանում եր նաև «գնուրք և զարտաքին փիլիսոփայութիւն՝ ամս տասն»։

Նույնիսկ 11-րդ դարում հիշվում ե Կիլիկիայի «Սեաւ լերան» մենաստանը, ուր հայտնի յեր Գրիգոր Վկայասերը։ Այստեղ եր ն. Լամբրոնացին, վորը՝ «տեսողականին կրթությամբ յառաջէր»։ Այստեղ եր Մխիթար Դոշը, սա «առ վարդապետուն որք էին ուսուցիչք անդ... բազում ինչ օգտեալ ի նոցանէ»։ Վերջապես այստեղ սովորեց ականավոր քերական ու գեղագիր Գեվորգ Յերզնկացին։ «Սեաւ լերան» առավելությունը, վորպես ուսուցման վայր, այն ե յեղել վոր այստեղ հավաքվել են համեմատաբար ավելի շատ ուսումնական և բանիմաց մարդիկ»։

Ն. Շնորհալին իր վոտանավորներից մեկի մեջ այդ տեղի մասին այսպես ե գրում.

«Զբանի սիրողն հաւաքեալ

Եւ առ ինքեան բնակեցուցեալ . . .»։

◀ Կիլիկիայի Մեծ Ուխտ անապատում և Մեծքարում կային դպրոցներ, այստեղ Հովհաննես Յերզնկացին դասաւու յեր և սովորեցնում եր՝ «զքերականն դաս իւրոց աշակերտաց» (Ալիշան—Հայապատում)։

Այստեղի հետ ել կապված ե այդ ժամանակի ճանաչված յերաժշտագետ Հովսեփի և նկարիչ Սարգիս Պիծակի անունները։

11-րդ դարում նշանավոր եր Սանահինը, սա հանդիսանում եր Բագրատունյաց դաստակերտը և հանգստաբանը։ Այստեղ կար դպրոց, վորին վոմանք ավելի ուշ ժամանակի տերմինով՝ ճեմարան են անվանում, իսկ վոմանք ել համալսարան։

Հստ Դրիգոր Մագիստրոսի, Սանահինը յեղել ե վայրը՝ «իմիասին բնակելոց իմաստնոց բոլոր արհեստից և մակացութեանց պարառելոց»։ Մագիստրոսը վկայում ե, վոր Սանահնում կար վարժարան և այնտեղ անցնում եյին մի շարք առարկաներ, ուր նույնիսկ մրցում եյին յերիտասարդները լավ սովորելու համար։

«Զերիտասարդացն որք ի վարժարանն՝ հոետորական և երաժշտական զնոցայն զմտաւ ածեալ հանդէս և զմրցումն և զգեղցիկ մոլութիւնն . . .»։ Նույն պատմիչը հաղորդում ե, վոր այստեղ յերաժշտական զմուրդությունը—գլխավորապես սաղմոսերգությունն եր,

վորպիսին վանական դպրոցների հիմնական առարկաներից մեկն եր հանդիսանում։

Մենք հարմար ենք գտնում սահմանափակվել դպրոցների մասին տրված վերոհիշյալ տեղեկություններով և յեղրափակել Անիում յեղած (12-րդ դարի) մի հետաքրքիր դպրոցով։

Այս դպրոցը ղեկավարում եյին Հովհաննես Այրիվագը, վորը իր ժամանակի բազմակողմանիորեն զարգացած անձնավորություններից մեկն եր։ Սա բազմաթիվ գիտելիքներ առած գալիս և Անի և «Չուրջ բակ բոլորեալ զմանկունս զիւրեալ խոնարհաբար և ախորժելի սիրով ուսուցաներ զիւրթին և զիւրին իրս»։

Այս դպրոցում ավանդվում եյին մի շարք լուրջ առարկաներ։ Նրանք սովորեցնում եյին՝ «Նախ զքերականութիւն» զբանալին գիտութեան և զգաստիարակն վերծանութեան և զաղբերն տառնեակ առողանութեանց, յորմէ և որով տրոհին միտք և ճանաչին ոյնք քաղացն և հեշտանան լսելիք ունկնդրանցն . . .։ Ինչպես տեսանք, այստեղ քերականությունը համարվում ե վորպես գիտության բանալի, խոսքի, մաքի և տրամաբանության զարգացման միջոց։ Քերականությունը նրանք գնահատում եյին վորպես գեղեցիկ խոսքի, արտասանության դաստիարակիչ գիտությունն, վորը հեշտացնում ե լսելու և կարդալու ունակությունը և հանդիսանում ե առողանության աղբյուրը։

Անիի գպրոցը լուրջ ուշագլություն եր դարձնում և կետադրության, տրամաբանական նշաններին ու շեշտերին, մանավանդ կրծատ ընթերցման հմտությանը, վոր այդ ժամանակներում ուներ խոշոր նշանակություն։

Գրագիտության ուսուցման զուգընթաց սովորողները պետք ե «տեղեկանան յերկայնագունիցն և սղիցն սիրոբայից երկամանակացն և անձայնիցն, և տրամախոն անկեցելոյ նշանին, ըստ վերսաստության շեշտի և ըստ պարբեկության պարուկի, և յարառոցելոյ պատգարձի . . .»։

Այս մեջբերումը պարզ կերպով ցույց ե տալիս, վոր Անիի դպրոցում (12-րդ դարում) իրոք բազմակողմանի կերպով եր ուսուցանութեանց խրատու և վայրից լեզուն, սա ապացուցում ե, վոր այդ դպրոցում կար ուսուցման արդեն վորոշ փորձ։ Այնուհետև ուսուցիչը՝ «Կրթէր, արկանէր ի գիրս նուրբս և գժվարալուրս և ըստ առողանութեանց խրատու ի վայր արկեալ պատրաստաբար խուզելով (կոկելով) զմիտս, և զբա և զբասու, առնելով համարս, ստուգիւ պահանջէր»։

Լեզվից հետո ուսուցման գլխավոր առարկան եր թվաբառնությունը. բնական ե, վոր Անիի տնտեսության զարգացման այդ շրջանում, յերբ առևտությը իր ընդարձակման նոր ուղիներ եր գտել մաթեմատիկական գիտությունը չեր կարող անուշադրության մատնվել.

«Յետ այսորիկ ի խոյզ և քնին ընթացից լուսաւորացդ մտեալ, տայր գումարելի ի միատեսակ և յանստերիւր թիւս տոմարի, գուշ և զակն ոգւոց և տեղեակ առներ տօնից կարգավորաց և փոփոխմանց ամսոց և ամանակաց և եղանակաց քառարաժին տարատմամբ»:

Այնուհետև հիշատակագիրը ասում ե, վոր մի շարք գիտնականների նշանավոր յերկասիրությունները, վորոնք արդյունավետ եյին և պիտանի, վորոնք նպաստում եյին առաջշարժմանը, մուտք եյին գործել այստեղ:

Անիի գպրոցում ուսուցանում եյին՝ «Բանս Արիստոտէլի և զբուականաչափի խտրոցս Փիլոնի»: Այս առարկաներից կատարվում եր խիստ ստուգում, վորպեսզի վոչ մի «անկարություն» չցուցաբերվի տրամաբանական դիտավորությունների ուսուցման գործում:

Սարկավագի մասին, վորպես ուսուցանողի, հիշատակվում ե, վոր նա բնական և հումանիտար գիտությունները մղում եր գեղագի իր կրթարանը: Այդ հիշատակության մեջ շատ պատկերագործ կերպով ասվում ե, վոր Անիի գպրապետը սովորեցնում եր թէ լավին և թէ վատին և նրանց գլուխները հարստացնում եր գիտելիքներով և, վոր գլխավորն ե, նա ձգտում եր պարզ ու բնական մեթոդներով յուրացնել տալ այդ ամենը: Նա՝

«Կրթէր զամանս իրաց, զքսակ մտաց մանկանց, մարդիկ և մաքրիչ և հալիչ, լաւին և վատթարին, պատրաստելով»:

Մենք հարմար ենք գտնում այս գպրոցի՝ մեղ հասած միքանի կանոններով սկսել այն բաժինը, ուր շատ համառոտ կերպով ուզում ենք հիշատակել դաստիարակությունը, կարգը և պատիժները միջնադասին:

## Վ ԱԿՆԱՐԿ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ, ԽՐԱՏԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անիի գպրոցի մասին կա վկայություն, վոր այնտեղ դաստիարակության խնդիրներից մեկը յեղել և սովորողների մեջ բարի նախանձի արուատավորումը և գրա հետևանքով, ասում ե հիշատակագիրը՝

«Եռայր ոգւով ամ ոգի, ել և ելս միմեամբք առնելով»:

Նույն հիշատակագիրի մեջ ասվում ե, վոր աշակերտները անշափ հնազանդ եյին իրենց ուսուցչին, բավական եր ուսուցչի մի ակնարկը, վոր նրանք խոնարհաբար լսեյին, զսպեյին իրենց և հնազանդվեյին:

Հիշատակագիրը այդ մասին ասում ե.

«Եւ այնչափ հրւեթիւն և հնազանդութիւն ուներ առ վդպն իւր, մինչ զի վասն գոյզն մի բանի առ նմա սաստելոյ և ասելոյ «լուռ լեր», զամս երիս լուեալ կայր ափ ի բերան, ընդ միտս և ընդ այ խաւսելով խոնարհաբար՝ ունկնդրութե պարապելով: Եւ զամս. Լ. լիով ոչ լուծեալ զբերան, այլ սանձեալ կրթեր և հնազանդէր զամենութիւն, անձին»:

Զափազանցությունները հեռու չեն հիշատակագիրից, սակայն մեզ հետաքրքրողը և կարեկորն այն ե, վոր պյատեղ կարգապահությունը իր պատշաճ տեղն ե ունեցել և արտահայտվել և հատուկ ձևերով ու յեղանակներով:

Թվում ե թէ այստեղ, հակառակ միջնադարյան գպրոցների կարգապահություն հաստատելու հիմնական միջոցը հանդիսացող ծեծին, կամ ինչպես Գր. Տաթեվացին կամեր՝ «Գաւազանի խրատ»-ին փոխարինում եր բանավոր խրատը: Այլ խոսքով սամձայս գպրոցի դաստիարակչական ներգործող մեթոդը վոչ թէ «Գաւազանի խրատ» ե յեղել, այլ խոսքի ուժը: Մենք չենք հավատում, վոր այդ գպրոցին ծեծը խորթ լիներ, հատկապես այդ ժամանակներում յերբ գործող պաշտոնական կանոնների մեջ որինականացված եր ծեծը, բայց չենք կասկածում, վոր ծեծի կողքին խրատն իր առանձին տեղն ու դերն ե ունեցել այստեղ:

Հովհ. Սարկավագը ընդունում եր, վոր դաստիարակելու հիմնական միջոցը խրատն ե, իսկ չարագործների նկատմամբ՝ պարապանքը: Նա ասում եր,

«Հրապարակաւ յանդիմանեցի, հրապարակաւ բըժշկեմ»:\*

Դասակարգային հասարակության մեջ դաստիարակությունը միշտ յեղել և տիրող դասակարգի ձեռքին խիստ, հատու զենքերից մեկը: Տիրող դասակարգը իր հատկությունները, իր ձգտություններին համապատասխան շահավետ կողմերը դաստիարակության միջոցով ներարկել եւ իր և այլ դասակարգերի սերնդի մեջ, իր նպատակին համապատասխան մարդիկ պատրաստելու համար:

Տիրող դասակարգերը շատ լավ են դիտակցել դաստիարակության ուժը: Դեռ անտիկ աշխարհում մարդիկ զգացել են դաստիարակության նշանակությունը և արժեքավորել են այն իրենց պահանջին համապատասխան: Աղեքանդը Մակեդոնացու հայրը Արիստոտելին ասում էր՝ «Յես արու զավակ ունենալու համար այնքան ուրախ չեմ, վորքան այն բանի համար եմ ուրախ, վոր իմ զավակին գուք պիտի դաստիարակեք»: Բնական ե, վոր հայ իշխանավորների, նախարարների, ֆեոդալների և հոգեվորականների համար դպրոցը պետք ե վոր իր պատշաճ տեղն ունենար, սա պետք ե ստեղծե՛ տերերի սեփական պատկերի մարդիկ և մյուս կողմից՝ մարդիկ, վորոնք լինելին հլու հնազանդներ:

Հատկապես դպրոցական հասակի պատանեկության և յերիտասարդության համար հայերը ունեցել են կանոններ, խրատներ և հրահանգներ: Նրանք փորձով գիտեյին, վոր այսպես թե այնպես մարդը արդյունք ե վորոշ միջավայրի, վորոշ շրջապատի: Նրանք գիտեյին, վոր չարիքներ տեսնելն ու վատ խոսքեր լսելը խիստ գյուրին ճանապարհով մարդուն գեպի խոշոր չարագործություններ և տանում:

Մի հրահանգի մեջ խորհուրդ ե տրվում ծնողներին և դաստիարակներին՝ «Այնպես պահել տղայն, որ մեղք չտեսնե և յիշշոց չլսէ»: Հայերը իրենց ասացվածքների ու առակների մեջ բազմաթիվ մտքեր ունեն այն մասին, վոր մանկան պետք և դաստիարակել շատ վաղ շրջանից. «Ծառը կանաչ կծուեն», այլապես մեծ ծառ ծուելը գծվար ե: Պարզ ե, վոր այդ ժամանակվա հայ կրթիչներն ու դաստիարակները սխոլաստիկական կըրթության հետևողներ ու փորոշակիորեն հայ ֆեոդալիզմի արտահայտիչներն եյին. հետեւաբար սրանք չեյին տեսնում և նախատեսում սոցիալական կյանքի փոփոխման հետեւանքով

\*) Սարկավագի գպր. մասին նյութերը վերցված են հիշատակարան «Հարանց վարք»-ից, վորը արտագրել ե Մաթեվոս Յերեցը հայոց Պիէ թվին Անդեղակոթում: Հին ձեռագիրը գրվել ե ՇՀ թվին Հաղպատում:

մարդկանց մասսայական փոփոխումը կամ դաստիարակության հասարակական բնույթը՝ վորպես միաժամանակ մարդկանց փոփոխման յերեվույթը:

Մի այլ հրահանգի մեջ Հովհաննը ասում ե՝

«Զթողուն, որ դատարկ շրջի տղան և չար որինակներ տեսնէ, որովհետեւ անոր մտաց վրայ դյուրավ կը տպաւորուի չարն, ինչպէս կնիքը կակուղ մոմի վրայ»:

Ալավկա վորպին իր «Կանոնաց» մեջ խրատում եր ծնողներին, թե ինչպես պետք ե վարվեն յերեխաների հետ: Նա արգելում եր մայրերին իրենց տղաների հետ մի անկողնում պառկելը «Ի տասնամենից ի վեր», այլ պետք ե «Ի բաց քեցել և արտաքոյ ինքեան կացուցանել»:

Նույն խորհուրդը տալիս եր յեղբայրների և քույրերի նկատմամբ, ասում եր «զի մի սովորեսցին ի չարն»:

Դրիգոր Տաթեվացին իր քարոզների մեջ մի շարք պարտականություններ և դնում ծնողների և ապա դաստիարակների վրա, վորոնք են՝ սնուցման յերեխային, դաստիարակել և հետու պահել անբարոյականությունից, սովորեցնել մի արհեստ, վորպեսզի նա չդիմի գողության, այլ իր աշխատանքով ապահովել իր կյանքը: Այնուհետեւ Տաթեվացին խորհուրդ և տալիս՝

«Զեղու տղային պահել, զի մի շատ խոսեսցի, և մի ի սուտ սովորեսցի... պահել զծեռն ի գողութենէ...»

պահել զբոլոր մարմինն ի ծուլութենէ, զի մի քնու և ծույլ և շատակեր ուսցիք»:

Մի ուրիշ հրահանգի մեջ ասվում ե՝

«Զտղայն դաստիարակն հրահանգէ, ի բաց կալ ի վնասակարաց, և յօգտակարսն կալ մնալ, և յանօգուտուն ոչ զբաղնուլ անժուժկալութեամբ»:

Մինադարում հայերի մոտ սովորություն ե յեղել յերեխայի մանկության մազերը մինչև 10-15 տարեկան հասակը պահել զլիքին, հիշվում են պատասխներ՝ «Քես արձակ ողջ» կամ «Քես արձակ, ձգե ուսն ի վար» և այլն:

Այս սովորությունը հիշատակում ենք նրա համար, վորպեսպի հիշեցնենք, վոր մազեր ունենալու սովորության հետ մեկտեղ կար և աշակերտին պատժելու գեպքում մազերը ոգտագործելու սովորություն՝ մազերից քաշել, պոկել, խուզել, վորպես այլանդակելու, ամաչեցնելու մի միջոց և այլն:

## ՊԱՏԻԺՆԵՐԸ

Այժմ տեսնենք, թե միջնադարյան հայոց դպրոցներում խրատական, գաստիարակչական յեղանակներին ինչպիսի պատիժներ են ուղեկցել: Նախ քան պատիժների մասին խոսելը, պետք է ասել, վոր մեր պատմիչները, ինչպես և բազմաթիվ հիշատակագիրները ընդհանրապես քիչ են խոսել մեղ հետաքրքրող թեմայի՝ դպրոցների, կրթության, գաստիարակության, ուսման մեթոդների և նման հարցերի մասին:

Ինչպես ծնողների, նույնը և գաստիարակների կողմից ընդունված եր՝ վորոշ գեպքերում աճարեկել յերեխաններին, վախեցնել գաժան անուններով, զատի յենթարկելով և այլն: Յեղել ե, որինակ, պատժի և գաստիարակության այսպիսի մեթոդ: ծնողը յերեխային սպառնացել և յենթարկել խիստ պատժի, այդ ժամանակ միջամտել և ուսուցիչը և յերգվել ե իր կարողությամբ ու պատվով, վոր կղաստիարակի յերեխային:

Սա իր ժամանակի գաստիարակման հետաքրքիր յեղանակներից մեկն եր, վորի մեջ յերեխում և ուսուցչի պատասխանառվության մոմենտը:

Մենք վերը տեսանք, վոր հայերի գաստիարակության մեջ արդեն կար նախազգուշական կամ, ինչպես ասում ենք՝ պրոֆելակտիկ միջոցառումներ: Դա գլխավորապես խրատական, քարոզչական ճանապարհն եր, վորից հետո հանցագործները անխուսափելուն պատժվում եյին: Ինչպես հույների, նույնպես և հայերի մոտ ընդունված եր պատժի մեջ յերկու սկզբունք, վոր ամեն մի պատիժ առաջին հերթին պետք ե հետապնդի յերեխայի ուղղմանը և յերկրորդ՝ հանցանքի չափով պետք ե վորոշվող պատժի չափը:

Հաճախ դպրոցի դպրատան պատիջ կախված եյին լինում ծեծի գեպքում գործածվող իրեր՝ մտրակը, ճիպոտը և այլն: Սրանք նախ և առաջ զգուշացնող պարագաներն եյին, շատ դեպքում ուսուցիչը «ճանապարհից զուրս յեկող» աշակերտին խորհրդավոր կերպով ցույց եր տալիս այդ իրերը. բնական ե, վոր աշակերտը սարսուռ պիտի զգար և հակառակ իր հասակի առանձնահատկություններին, սանձահարեր իրեն:

Այդ բանը հիշվում է Անիի դպրոցում՝

«Այլ սանձեալ կրթէր և հնազանդէր զամենութիւնն անձին»:  
Դասեր հարցնելու ժամանակ վայ նրանց, վոր «չտային»:

Համարս», դրանց բաժինն եր՝ «գան ըմպել» (ծեծ ուտելը):

Յերբեմն ուսուցիչը անկարգ յերեխայի ծնողին խորհուրդ եր տալին դաստիարակության գործը ուսուցչին թողնել վորովիչնետե վերջինս գիտի, թե ինչպես պետք ե վարվի յերեխայի հետ: Նա ասում եր. «Յիս թող, յայսմ հետէ ես եմ երաշխաւոր», կամ պատասխանատու:

Սակայն հետաքրքրականն այն ե, վոր այդ ժամանակված գաստիարակությունը ծնողի ձեռքից դաստիարակությունը խլում եր վոչ թե նրա համար, վոր վերջինս ծեծում եր յերեխային, այլ նրա համար, վոր այդ ծեծը լինի կազմակերպված ու նպատակային, վոր յերեխան վորք հասակից վարժվի, թե ինչը կարելի յե անել և ինչը չի կարելի:

Այդ ժամանակի գաստիարակները գտնում եյին, վոր ծեծը չարիք չե, այլ նա առերեվույթ ե մի անախորժ բան, վորը սակայն մարդուն կհասցնի մինչեվ վառքի աստիճանը: Այսինքն ծեծը մարդուն հլու հնազանդ կդարձնի, իսկ տերերը կգնահատեն մարդու նման արժանիքները, վորովհետեւ նրանց պետք եր հնազանդ ծառայություն:

Յերբեմն սովորողները ծեծվում եյին վոչ թե անկարգության, այլ գասերը չսովորելու համար: Այս յերեվույթը հենց բղխում եր նրանց գաստիարակության սկզբունքից, վորովիհետեւ չենթարկվողը, հանձնարարություն չկատարողը պետք և ծեծվեր, պատժվեր, ինչպես կյանքի մեջ, այնպես ել դպրոցում:

Ներսես Շնորհալին իր խրատական վաստակուներից մեկի մեջ հենց այդ մասին ել խոսում ե՝

«Քեզ համարել տայ բարեկամ

Որք գամն ուսման հարուն քեզ գան.

Քանզի ապտակ և գաւազան»:

Յետոյ բազում փառը քեզ տան»:

(Շնորհալի—Քանզի չափաւ 549):

Շնորհալին «բազում փառը» խոստանում եր նրան, ով իսկապես կյուրացներ այն ամենը, ինչ պահանջվում եր այդ ժամանակված մարդուց խոնարհ ծառայության համար:

Այնուհետեւ միջնադարյան հայ դպրոցների պատժի ունիվերսալ միջոց հանդիսացող ծեծը արտահայտվում եր տարբեր յեղանակներով: Մենք սամինք, վոր Գր. Տաթեվացին խրատներից ամենաակտիվը, ամենաներգործողը համարում եր «գաւազանի խրատը»: Սարկավագը հիշում ե, վոր ծնողների կողմից

ժեծը վոչ միայն չեր դատապարտվում, այլ խրախուսվում եր թե դպրոցում և թե տանը՝ «Բազում անգամ գան ըմպելով մանկանն ի մօրեն»։ Սարկավագը նկարագրում է ծեծի հետեվանքները, վորը այն աստիճանի յեր հասնում, վոր ծեծվողը «կոչեցեալ ի նմանէ՝ ի գիրկն անկանի» (Սարգ. 299):

Միջնադարյան դպրոցներում ծեծը չեր սահմանափակվում ուսուցչի ծեծով, յերեմն ուսուցչի հրամանով աշակերտն եր ծեծում իր ընկերոջը—աշակերտին. սրա հետեվանքների մասին ավելորդ ե խոսել:

Մի շարք հիշատակությունների ու վկայությունների հիման վրա կարող ենք ասել, վոր Փիղիկական պատիճները դպրոցում արտահայտվում եյին հետեվյալ յեղանակներով, ծեծն ընդհանրապես, գավազանով ծեծը, մտրակի գործադրումը, ծնկաչոք անելը, ծանր իրեր ձեռքի վրա պահելը, ճիպոտով ձեռքերի ափի մեջ և մատներին խփելը, ականջներից ու մազերից քաշելը, ճաշաղուրկ անելը, ընկերների հետ խաղաղըրկումը և այլն։

Այս ամենը հատուկ են յեղել միջնադարյան դպրոցներին առհասարակ և վոչ միայն հայ դպրոցներին։

Սա չի ասում այն, վոր Փիղիկական պատժի առկայությունը նշանակում եր բարոյական խրատների ու քարոզների վատարումը դպրոցից. ամենելին։ Միջնադարի հայ դպրոցներում քարոզն ու խրատը, կանոններն ու որենքները իրենց ուզած մարդու ձեվակերպման հիմնական միջոցներն եյին հանդիսանում, մանավանդ վոր ամեն դեպքում խոսքը ոդտագործվում եր սխոլաստիկ ձանապարհով, պատրաստի դոգմաները մարդկանց մեջ ամրացնելու նպատակով։ Նույնիսկ հիշվում են առանձին դաստիարակներ, վորոնք Փիղիկական պատժի չեն գործադրել։ Սակայն այդ դըպրոցների ծեծն ու խրատները չեյին հակասում միմյանց մարդկանց հլու համարն ու դաստիարակելու գործում, ընդհակառակը, դրանք համապատասխանում եյին վերոհիշյալ պրոֆիլի մարդկանց ստեղծելու պահանջներին։

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ ՅԵՎ ՈՒՍՈՒՑԱՌՈՂՆԵՐԸ

Ինչպես վերն ասինք, գեռ վաղ ժամանակում ուսումնական հիմնարկները կոչվում եյին դպրոց, դպրանոց կամ դպրատուն։ Դպրոց անունը գործածել են՝ Ազաթանգեղոսը, Փակստոսը, Ղ.

Փարպեցին, Խորենացին և ուրիշները։ 9—10-րդ դարերում յերբեմն դպրոցի փոխարեն ուսումնական վայրը կոչվում եր՝ «աշակերտարան», «վարդապետարան», վորոշ տեղերում՝ «Բաբունարան»։

Հետագայում մի շարք պատմիչների մոտ, ինչպես և հիշատակագրերի մեջ, հանդիպում ենք ուսումնատեղերի այսպիսի անունների՝ «վարժարան», «դպրատուն», դասատուն», «դպրոցատուն», ուսումնարան», ավելի ուշ՝ «վարժատուն» և այլն։ Վերոհիշյալ տերմինները գործածվում են՝ Նշեցու, Ան. Նարեկացու, Ե. Շնորհալու, Ստ. Որբելյանի, Ա. Դավթիմեցու, Թ. Մեծոփեցու և ուրիշների կողմից։

Բնական ե, վոր ուսումնական հիմնարկների անուններին պետք ե համապատասխաներ նաև նրա պաշտոնյաների և սովորողների կոչումները։ Այսպես որինակ. ուսումնարան—ուսուցիչ ուսուցող, ուսուցանող, «տալոյ զուսումն», կամ դպրատուն—դըպրատիստ, այսուհետեւ՝ վարժարան—վարժապետ, դասատուն—դասատու, դասասաց, վոր նշանակում ե գաս ասող և այլն։

Ուսումնական վայրերում աշակերտները, սովորաբար, դասի ժամանակ նստում եյին ծալապատիկ կամ ծնկների վքա, ուսուցիչները նստում եյին յերեմն ծալապատիկ, կամ վորեև բարձր տեղ, աթոռի վրա, իսկ վորոշ դպրոցներում ուսուցչի համար գոյություն ուներ ամբիոն։ Այսպես որինակ. Ստ. Որբելյանը ասում ե, վոր Մաթուսաղան նստում եր՝ «ի վերայ բարձր ամբիոնի բարունարանին» կամ «նստավ յամբիոնն բարունական»։

Յերզնկացին իր ժամանակիցներից մեկի մասին ասում ե, թե նստած՝ «ի վարդապետական աթոռ՝ ասել դաս»։ Նույնը ասում է Թ. Մեծոփեցին Տաթեացու մասին։

Հիշվում ե նաև «յաթոռ ուսուցման», վորը նշանակում ե ուսուցանողի աթոռ։

Կիրակոս Գանձակեցու կողմից հիշատակվում են կոնստանտին առաջինի կանոնները, ուր կամ դպրոցի զեկավարման հետաքըլքի պահանջներ։ Այստեղ ևս գործածվում են դպրոցական և կըրթական այն տերմինները, վորոնց մասին մենք վերցինք։

## ԻՆՉ ԵՅԻՆ ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ

Մենք վերը հիշեցինք, թե ինչ եյին ուսուցանում մի շարք դպրոցներում, ուստի անհրաժեշտ ենք համարում այստեղ համա-

ռոտակի կերպով թվարկել այդ ավանդվող առարկաները:

Նախ՝ գոյություն չունենալով կրթական մի ընդհանուր սխտեմ, չեր կարող ավանդվող առարկաների մի ընդհանուր սխեմա լինել բացառությամբ կրոնական առարկաներից: Իսկ մնացած առարկաները ամբողջապես վորոշվում եյին զասատվական կազմով. նայած ավալ դպրոցը հւմ ձեռքին եր և դասառուները ինչ գիտելիքներ կարող եյին ավանդել հենց դրանով ել վորոշվում եր այդ դպրոցի ուսման բովանդակությունը:

Այդ շրջանի դպրոցների գգալի մասն ուներ մեկ ուսուցիչ, ուստի այդ ուսուցանողը շատ գեպքում դասավանդում եր մեկից ավելի առարկաները: Անշուշտ այս յերեսությը ավելի ցածր աստիճանի վրա կանգնած դպրոցի նշան ե:

Այժմ կարող ենք թվել այդ դպրոցներում ավանդվող առարկաները: Բնական ե, վոր այդ առարկաները ամբողջությամբ չեյին դասավանդվում ամեն մի դպրոցում, մի դպրոցում ավելի քիչ եր առարկաների քանակը, իսկ մյուս դպրոցում ավելի շատ:

9—13-րդ դարի դպրոցներում ավանդվում եր՝ մայրենի լեզու, քերականություն, հունական և լատինական լեզուներ, ձարտասանություն կամ հոետորություն, փիլիսոփայություն կամ իմաստասիրություն, քերթողություն կամ բանաստեղծություն, յերաժշտություն կամ յերգեցողություն, նկարչություն կամ մանրանկարչություն:

Այնուհետև ուսուցանում եյին մի շաբք դպրոցներում «գրչի արուեստը», գրչությունը, գեղեցիկ գրությունը, վորը վոչ այլ ինչ եր, քան գեղագրություն: Գեղեցիկ գրության մի մասը հասել ե մեզ, դա այն հաղարավոր սքանչելի ձեռագրերն են, վորոնք գտնվում են մեր մատենադարանում: Յեթե այդ ձեռագրերն իրենց բովանդակությամբ շատ բան են ասում մեր ժողովի անցյալից, ապա նրանք քիչ բան չեն ասում այդ նույն ժողովի գրության և նկարչության արվեստի մասին:

Վորոշ դպրոցներում ուսուցանում եյին բնական գիտելիքներ, աստղագիտություն, թվարանություն, տոմարագրություն և այլն: Իսկ կրոնական առարկաները, առանց բացառության, բոլոր դպրոցներում դասավանդվում եյին:

Հետաքրքրականն այն ե, վոր միջին գարերի հայ դպրոցներում ուսուցանում եյին առանձին գիտնականների տեսությունները, հենց գիտնականի, գիտության կանառների անունով:

Այսպես, որինակ, մեր հիշատակած Անիի դպրոցում Սարգավագը ուսուցանում եր՝ «գառակախաւս բանս Արխտոտէլի և թուականաչափ խըտրոցս Փիլոնի» և այլն:

Ուսուցանում եյին «Պաւղոսի թղթերը», «Պղատոնի մտքերը», «Դավիթ Անհաղթի փիլիսոփայությունը», Ան. Շիրակացու «Աստղաբաշխությունը», «Աստղագիտությունը», «Տիեզերագիտությունը», ինչպես նաև հունական գրականությունը և այլն:

## ՈՒՍՈՒՑՄԱՆ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Յեթե հնարավոր ե մի շաբք պատմիչներից, հիշատակագրեթից, մեզ հետաքրքրող հարցերին վերաբերող առանձին ուսումնասիրություններից վորոշ ակնարկներ և նկարագրություններ գտնել այս կամ այն դպրոցի մասին, ապա չափազանց դժվար ե այդ աղբյուրների մեջ գտնել դպրոցի ներքին կյանքին վերաբերող փաստեր, մանավանդ ուսուցման ձևերի, յեղանակների և մեթոդների մասին:

Յերբեմն հանդիպում են այսպիսի արտահայտություններ, վոր գիր կամ գրել կարդալ սովորելու համար մարդիկ տարիներ շարունակ չարչարվել են: Սա ցույց ե տալիս, վոր գրածանաշության մեթոդիկան այդ ժամանակ իր խանձարություն գեռ գուրս չեր յեկել և գրագիտության ուսուցումը ավելի վատթար ե յեղել քան 17—18-րդ դարերում:

Միջնադարի ուսուցիչը խիստ կերպով պահանջում եր, վոր ամեն մի աշակերտ տրված դասը լավ գիտենա, կարողանա կարգալ և պատմել իր նման, իր պսածից վոչինչ ավել կամ պակաս, գրա համար ել աշակերտների մեծ մասը սերտած, բերան արած մտնում եր դասարան: Սխոլաստիկ ուսուցման այս յեղանակը գրկում եր սովորողներին ինքնուրույնությունից, տրամարանական ուժին փոխարինում եր ձևական, մեխանիկական վարժեցումը: Այլ խոսքով ասած, այս կարգի ուսուցումը վոչ թե զարգացնում եր մարդուն, այլ վարժեցնում, վոչ թե փաստեր եր տրվում մշակելու, վերամշակելու, այլ փաստերը մեխանիկորեն կրկնելու, տրամարանության փոխարեն՝ սերտածի շարագրություն, մի խոսքով վոչ թե գիտություն, այլ վարժություն:

Այնուհետև ուսուցիչը շատ հաճախ իր կարգացածը խմբովին կրկնել եր տալիս աշակերտությանը, իսկ հաճախ աշակերտները կարդում եյին հաջորդաբար, մեկը մյուսին շարունակելով կամ

«Գրած ցուցակով»: Դրավոր աշխատանքի հիմնական ձեզ դա արտագրությունն եր: Ընդունված եր դասարանում դասի սերտելու սովորությունը՝ «լուռ կարդալու» և «մեծաճայն կարդալու» յեղանակով: Այնուհետև պատահում ենք դասեր սովորելու այսպիսին ձեմ՝ ուժեղ աշակերտի զիմավորությամբ դասերը կրկնել, ապա բացատրել, մեկը մյուսին լրացնել, վիճել: Սակայն ընկերական շրջանի այս վեճը ուսուցչի մոտ չի տեղափոխվում, վորովինետև ուսուցչի հետ վիճելը համարվել է պարկեշտության սահմանից դուրս մի բան և նույնիսկ «մեղք», քանի վոր «աշակերտը չե իմաստուն քան զվարդապետ իւր»:

Ուսուցչի կողմից աշակերտի քննությունը—դա վերջինիս համար փորձության մի ծանր շրջան եր: Քննության հատուկ յեղանակներն ու ձեռքը, ստեղծված արտակարգ խորհրդավորությունը, դասարանական սովորական խստությանն ավելանում եր ինչվոր անսովոր, չար կերպով արտահայտվող լրջություն, սրանք չեցին կարող չարագուշակ բաներ չասել ու չշփոթել քննվող աշակերտին:

## ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԴԱՍԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ԵՐՈՍՈՒՄ

Ինչպես վերը տեսանք, «Սասունցի Դավիթ» եպոսի ծագման և ձեռքորման շրջանում (9—14 դարերում) հայերը ունեցին դպրոցներ և դպրոցական վորոշ սիստեմ, նույնիսկ դասագրքեր, վոչ միայն կրօնական, այլև արտաքին գիտություններից: Այս ամենի առաջության պայմաններում, ինչպես մենք ցույց տվեցինք, գոյություն ուներ ուսուցման վորոշ ուղղություն, ուսուցման ձեռք ու յեղանակներ:

Եպոսի ծագման շրջանի հայերի գրադիտության և գիտեկական վարժությունների մասին բազմաթիվ նմուշներ կան և ապոսի մեջ: Յելնելով եպոսում յեղած հիշատակություններից, մենք տեսնում ենք, վոր գրագիտությունը տարածված և յեղել ժողովրդի մեջ, իհարկե, առավել չափով բարձր խավերի մեջ:

Եպոսի հերոսներից գրագետ են մի շարք մարդիկ՝ Մհերը, Դավիթը, Փոհարը, Սանասարը, Բաղդասարը և ուրիշները:

Եպոսում հիշատակվում են՝

«Գոհար խաթում գիրք իդի հեռջիվ,

Կարդաց, տեսավ՝ խրողբերն ի»:

Կամ աղջկա նամակը զրված Բաղդասարին.

«Բաղդասար տղա,

Իմ սըրտ քանց եսա դարտակ կուժ սերառվի ի.

Իմ գլուխանց եսա լիք կուժ լիքն ի»:

Մի ուրիշ տեղ հիշվում ե վոր Սանասարը՝ «թուղթ առավ ձեռ, թուղթը կարդաց»:

Նույնպես և Բաղդասարը՝ «թուղթը վերցուց, կարդաց, գրեց, ջուղար երեց»:

Դրագետ ե և ձեռով Ոհաննը, նա թուղթ ե գրում Մհերին՝

«Մհեր, կուղբարդնը աղգական տղեք ելած ին, կտրճացած եկած Սասունա քաղքի դավին կենին.

Իս չըմ կեռնա, իմ խըփաթը չհաղթը.

Կենիս, կի կաս, խամնիս»:

Խանդութ Խաթումը նույնպես գիր ե գրում՝

«Խանդութ գիրը գրեց, ոսյաթ երից»:

Այսուհետև (Աձմու շահնը) թուղթ ե գրում, վորով առաջարկում ե Խանդութին կամովին գնալ իր մոտ, այլապես ուժով կտանի.

Խանդութը այս թղթին պատասխանում ե՝

«Իս չըմ իգա, շատ կըտրիմ եք,

իկեք, ընձի գոռով տարեք»:

Դրագետ ե և Մհերը, սա կարդում ե ու գրում, վորովինետեւ

«Մհերն որ եկավ—եղավ յոթ տարեկան,

Յոթ շնոք եղավ իր բոյ:

Ենոր վանք-վարժատուն դրին,

Քիչ մի սորվափ, շնորքով լցվափ...»

Մի ուրիշ տեղ՝

«թուղթ կը կարդա Մհեր, կը խասկընա.

Կերթա, ուր կնկան կըսը»:

Եպոսի բազմաթիվ վարիանտներում հիշատակվում ե Դավիթի գրագետ լինելու մասին: Խանդութ Խաթումը նամակ ե գրում Դավիթին՝

«Թի առ ինձի հախտեցիր, ինչ կուղես, առ տամ»:

Եպոսում հիշվում ե՝

«Վոր թուխթ առավ Դավիթ, կարդաց, իմացավ՝ Խանդութ Խաթումի ի կիրե»:

Մի ուրիշ վարիանտում ասվում ե՝

«Ու Դավիթ գնաց տերտըոջ տուն».

Սաղմոց առավ ձեռ, սաղմոց ըսեց»:

Այսքանն ել բավական է համոզվելու համար, վոր եպոսի ծագման և ձևավորման շրջանում հայերի մոտ գոյությունունեցող գրագիտությունը արտահայտվել է վեպի համարյա բոլոր վարիանտներում, և գրագիտությունը, վորպես կուլտուրայի վորոշ աստիճան, եպոսի մեջ հիշատակվում է պատշաճ հարդանքով:

Հիմնականն այն է, վոր ժողովուրդը ցանկացել է ստեղծել իր սեփական պատկերի մարդ, վոր Դավիթը իրենից ժողովրդի ամբողջությունը ներկայացնի, լինի ժողովրդի ձգտումների, ցանկությունների արտահայտիչն ու կենսագործողը. և այդ հաշողվել է նրան:

Ժողովուրդը յերազում եր մի վիթխարի ուժ, վորն իր ձեռքով բռնակաների արդար դատաստանն աներ և հաստատեր ժողովրդների խաղաղությունը:

Մենք վերը ասինք, վոր հայ ժողովուրդն իր ստեղծած եպոսի մեջ վոչ միայն արտահայտել է այն սովորություններն ու դաստիարակչական գծերը, վոր յեղել է իր կենցաղի մեջ, այլ և այն ամենը, ինչ ինքը տիրողների լծի տակ կենսագործել չեր կարող, բայց նա յերազում եր, տենչում և պայքարում եր հասնել նրան:

Ժողովրդի ստեղծած Դավիթի մեջ խտացած են մարդկային գեղեցիկ հատկությունները, նա սիրում է աշխատավորներին, հովիվների, հոտաղների ու չքափոր գյուղացիների «քաղցր աղբերն» և, նա փայփայում է յերկրագործներին, հողի մշակներին — «հունձ ու փունջ» անողներին:

Դավիթը սիրում է իր հայրենիքը, իր ժողովուրդը, նա սիրում է և ուրիշ ժողովրդներին, աշխատավոր մարդկությանը:

Իր ժողովրդի ցավով տառապած Դավիթի ձեռքից և վոչ մի ուժ չեր կարող խլել կայծակի թուրը, յերբ նա ջարդ ու փշուր եր անում Մորա բանակը. բայց հրաշքը կատարվում է:

Մորա բանակից մոտենում է Դավիթին մի խելք ծերունի. — Ինչու յես կոտորում խելք ժողովրդին, ի՞նչ են արել սրանք քեզ, կոփիվը թագավորն է անում և վոչ թե ժողովուրդը, — ասում է ծերուկը: Դավիթի բազուկը թուլանում է և նրա սուրը

ուղում կախված է մնում, վորովհեակ Դավիթը Մորա ծերունու բերանից լսում է այն, ինչ վոր իր ժողովուրդն է ասում:

Դավիթը ատում եր բռնականերին, տերերին ու իշխաններին, պատերազմ նյութով յերկրականերին, խաղաղությունը խափանող ժողովրդի թշնամիներին:

Ժողովուրդն իր ստեղծած մարդուն տվել եր իրեն հատուկ վեհանձնություն, մեծահոգություն, մարդասիրություն, պարզություն և քաջություն: Դավիթը չեր սիրում նենգություն և խարեյություն, նա իր ժողովրդի նման եր մտածում և խարեյությամբ բերդ գրավողին հերոս չեր անվանում:

Այդ եր պատճառը, վոր, Մորա բանակի վրա հարձակվելուց առաջ, նա արթնացրեց ամենքին, զգուշացրեց, վոր պատրաստվեն, վորովհետեւ ինքը չի ուղարկել:

Դարերի ընթացքում ստեղծված, ժողովրդի տրամադրություններն ու ցանկությունները իր մեջ ամփոփած «Սասունցի Դավիթ» եպոսը ինքը իրենից միաժամանակ ներկայացնում է հայ ժողովրդի կողմից առաջադրված դաստիարակչական ինսդիրների մի ամբողջություն, ժողովրդական մարդու տիպարի ստեղծման գեղեցիկ որինակ: Ժողովրդի դաստիարակած մարդը սիրում եր ժողովրդին, ատում եր ժողովրդի թշնամիներին, վոչնչացնում եր բռնու բռնականերին, ստեղծում եր յեղայրություն ու համերաշխություն բռնու ժողովրդների մեջ և ձգտում եր հաստատել մշտական խաղաղություն:

Ժողովրդի ու հայրենիքի պաշտպանության համար Դավիթը չեր ինսայում իր կյանքը: Բռնականերին և ազրեսորներին նա «ջարդ ու կտոր եր անում», իր թուր կայծակով հնձում եր նրանց յերկրի յերեսից:

Այսպես դաստիարակեց հայ ժողովուրդը իր հերոս զավակին՝ իր Դավիթին:

## ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Այսուհետեւ արժե հիշել ֆիզիկական դաստիարակությունը և մասամբ նրա արտահայտությունը «Սասունցի Դավիթ» եպոսում:

Բազմաթիվ հիշատակություններ կան եպոսի ծագման շրջանի հայ յերեխաների զբաղմունքի մասին: Դեռ վաղ պատանեկան ըլջանից այդ յերեխաները ոգնում եյին իրենց ծնող-

Ներին: Վորքան պրիմիտիվ եր մարդկանց աշխատանքի և արտագրության յեղանակները, այնքան շուտ եր վարժվում պատահին և փոքր հասակից մասնակցում՝ իր ծնողների զբաղմունքին: Առանձնապես Սասնա «Ծոերի» յերեխաները շատ շուտ ելին ընտելանում տան և զրսի աշխատանքներին: Նրանք դառնում ելին գաւառաբած, հորթարած, հովվի և նախրորդի ողնական, հնտո՛ հովվի, նախրորդ, հոտաղ, հողագործ, նրանք պահում ելին գլուխ ու կորեկի արտերը և այն: Աղջիկներին պատրաստում ելին տան աշխատանքի համար, սովորեցնում ելին բուրդ զզել թեշիկ կամ քարման մանել, քարգան, կովկիթ, բեր գնալ, լվացք անել և կերակուր պատրաստել:

Այդ շրջանի հայ յերեխաների մեջ տարածված են յեղել բազմաթիվ խաղեր, վորոնցից մի շարք խաղեր մնացել են մինչեղ այժմ: Արժե հիշատակել այդ խաղերից մի քանիսը: Խաղում ելին ճան (կոճի, վեզ), Անիի պեղումների ժամանակ մի տղայի կմախքի հետ գտնվել և կավե անոթ, վորի մեջ լցված են յեղել ճաներ: Յերեխաների հետ իր խաղալիքները թաղելու սովորությունը հայտնի յե և ուրիշ ժողովրդների մոտ: Այնուհետեւ խաղում ելին՝ «անդուկ-պնդուկ», «սանդուխչա բեր բոխչա», «թոնոցի», սրան այժմ ասում են՝ «ուչ ատում», «ճլորթի» կամ «ճղլոր»: Խաղում ելին «գունդ», «հոլ» կամ «հոլ ու կոպալ», «վիտ» կամ «պտավող», «ֆոռան» սա մտրակով ելին ֆոռացնում: Հայոց պատմության մեջ այս «ֆոռանը» հիշվում է յերեմն «Շորնչան» անունով: Որինակ՝ Յեղնիկը խոսելով ասաղերի մասին, ասում ե՝ «Իբրեւ զշոնչանն ըշիցին», կամ մի ուրիշը պճնասեր կանաց մասին խոսելիս ասում ե՝ «այսր անդր ստէպ իբրեւ զշոնչանն ըշիցին»:

Տարածված խաղալիքներից ելին նաև «անիվը», անիվ գլորեցնելը կամ «կլորակը», «փայտոցիկը» կամ «տլուրը», «ճակարանքը», «տաղարին» կամ «տաման», «նարտը» և ուրիշ նման խաղեր: Կային և ուրիշ ժողովրդներից փոխադրված խաղեր, որինակ՝ «ճատրակը»— հնդկական խաղ ե, վորը կոչվում եր նաև «շատուրանդա», այդ խաղին Պահլավունիք ասում ելին՝ «ճատրանդ», խկարաները՝ «սաթրանձ»: Այս խաղը միջին դարերում գործածվում եր Հայաստանում, կա այսպիսի արտահայտություն՝ «ճատրկաց խաղացեալ ես. ասէ՝ այո», սա վորոշ չափով նման և շախմատին: Կազմակերպված, վորոշ ուղղություն ունեցող փիղիկական վարժությունները, մարդանքները հին և միջին դարերի հայերի

կենցաղի մեջ մտած տրաղիցիոն սովորություններ ելին հանդիսանում:

Դեռ միջին դարում հայերի մոտ վորոշակի կերպով զոյտւթյուն ուներ «հանդիսական ուսմունքը», վորը տեղի յեր ունենում՝ հրապարակներում, ասպարեզներում, զրոսավայրերում և, վոր գլխավորն ե, թատրոններում, ինչպես հիշվում ե՝ «թատերական մարզանք»:

Ինչպես հույները իրենց ոլիմպիադաներում հանդես ելին բերում ֆիղիկական վարժությունների, ուժի, ճկումության, զինավարժության հմտության և արվեստի բոլոր տեսակների մըրցությունները և ամփոփում ելին այն, այնպես ել հայերը մըրցությունները ելին կազմակերպում նավասարդյան տոններին:

Այստեղ յերիտասարդները հանդես ելին գալիս զանազան մարզանքներով, ցույց ելին տալիս իրենց չնորհքը՝ ուժի, մկանների վարժության, ճարպկության, ճիարշապի, սրախաղության, մկունդի գործածության, յերգի, բանաստեղծության և այլ արվեստների միջոցով:

Պատերազմի ժամանակ գործադրվող զենքերը հանդիսանում ելին նաև ֆիղիկական վարժության համար գործիքներ: Այդ եր պատճառը, վոր գեռ վաղ պատանեկական շրջանից մարզական գործիքներին վարժված յերիտասարդը արգեն հմուտ զինվոր եր: Այդպիսի յերիտասարդը զիտեր սրախաղությունը, կարողանում եր վարժ կերպով գործածել նետն ու աղեղը, նիզակը, մկունդը, պարսատիկը և կավի ուրիշ միջոցները:

Բազմաթիվ վկայություններ ցույց են տալիս, վոր հայերը հատուկ ուշադրություն են դարձրել ճիարշարժությանը:

Հ. Սարկավագը (12-րդ դար) վկայում ե, վոր հայերը մանկությունից վարժվում ելին ֆիղիկապես, և այդ ամենը տեղի յեր ունենում կազմակերպված, հատուկ մարզիչների ղեկավարությամբ, վորոնք սովորեցնում ելին «խրատու», «արուեստապես»: Սարկավագը ասում ե.

«Քանզի և ճիարշարժեան և աղեղնաւորութեան և այլոց զինուց շարժականութեանց՝ առանց խրատու և ի մանկութենէ արուեստապէս վարժութեան չիք համար տեղեկութիւն առնուլ. նմանապես և բռնամարտկութեան և այլոց հանդիսականաց ուսմանց»:

Այս պարզ վկայությունը ցույց ե տալիս, թէ ինչպես ելին

սովորեցնում ֆիզիկական վարժությունները: Այդ նույն դարում  
Դրիգոր Տղան մարզական խաղերի մասին այսպիս և գրում:

«Ուր կոռարարքն ի ճակատին,  
Կամ ըմբշամարտք պատերազմին.

Ուր ծիավարքքն ի թատերին,  
Նիզակիրքըն վահանին.

Ուր են նետողք նըպատակին,  
Սուսերամերկը դիպող բազկին.

Ուր պարսաւորք ճահողակին»:

Սա վկայություն ե այն մասին, վոր թատրոններում, աս-  
պարեզներում և հրապարակներում այդ ժամանակ ևս անդի եյին  
ունենում մրցումներ, այդ մրցումների ժամանակ հանդես եյին գա-  
լիս ուղմական և ֆիզիկական վարժությունների բոլոր ձեվերն  
ու գործողությունները:

Պատմիչ Թովմա Արծրունին նկարագրում է այն քանդակը,  
վորի վրա Գագիկ Արծրունու մի մասսայական զրոսանքն ե  
պատկերացված, յերբ տեղի եյին ունենում բազմատեսակ մրցու-  
թյուններ: Այսպես ե նկարագրված նրանց զրոսանքը՝  
«Սուսերամերկաց յոյլք և ըմբշամարտաց պատերազ-  
մունք, անդ և գասք առիւծաց և այլոց գագանաց և  
անդ երամք հաւուց»: (Թ. Արծրունի. 482)

Մշտական պատերազմի արհավիրքը հիմնական պատճառն եր այն  
բանի, վոր հայերը իրենց յերիտասարդներին ավելի վաղ հասա-  
կից եյին տալիս ուղմական վարժություններ:

Պատերազմի պայմաններում գործադրվող գենքերը խաղաղ  
շրջանում հանդիսանում եյին հայ պատանիների և յերիտասարդ-  
ների կենցաղային գործիքներ:

Հովհ. Մանդակունին նկարագրում է հայերի թատրոնը:  
Թատրոնը նստելու բարձր և ցածր տեղեր ուներ: Բաժանված  
եյին կանանց և տղամարդկանց տեղերը: Թատրոններում կա-  
տարվում եյին բազմատեսակ մրցություններ:

Այդպիսի մի թատրոն կար Դվինում, վորի մասին կան մի  
շարք հիշատակություններ: Արար վոստիկանապետ Յուսուփի  
Դվինի թատրոնի մեջ բանտարկեց Գնունիներին՝ Դավթին ու  
Դուրգենին, նրանց «ածան ի թեատրօնն»:

Բազրատունիք և Սյունիք նույնպես ունեյին թատրոններ:  
Այդ թատրոնները այնքան գայթակեցուցիչ են յեղեւ, վոր հո-

գեվորականներն ել հաճախելիս են յեղեւ այստեղ: Այդ եր պատ-  
ճառը, վոր Նարեկացին, Դառնեցին և ուրիշները զատապարտում  
եյին քահանաներին, վոր իրենց պարկեշտ չեն պահում և մտնում  
են թատրոնները, «մի մտցիս դու ի տունս թատերաց», կամ  
«աստ ի թատերս և ի հարսանիս մի մտցէ»:

Այս յերեվույթը ցույց է տալիս, վոր թատրոնը իր մեջ  
արտացոլում եր աշխարհիկ բարքերը, վորոնք ձեռնառու չեյին  
հոգեորականությանը:

Զիարշավի մրցման համար հայերն ունեյին հատուկ տեղեր,  
վորոնք կոչվում եյին՝ «Ճիարձակարան», «Ճիբնթաց» կամ Ճիբն-  
թացիկ ասպարեզ»: Այս վայրերին մի շարք պատմիչներ ուղղա-  
կի ասում են՝ «ասպարեզ», «կրկես» կամ «թեատրօն»: Թ. Արծ-  
րունին ասում ե, վոր Գագիկ իշխանը զվարձանում եր ասպա-  
րեզում՝ «Ճախր առեալ ձեմէր յասպարիսի անդ»:

Զիավարժները սովորում եյին բազմաթիվ ձեեր և պրիոմ-  
ներ, վորոնք արտահայտվում եյին մրցումների, ինչպես և պատե-  
րազմի ժամանակ: Վարժ Ճիավորները սովորեցնում եյին յերի-  
տասարդներին վարժ կերպով ձի քշել այնպես վոր շատ գեղ-  
քերում նույնիսկ չոգտագործեյին սանձը: Այս վարժությունն  
անհրաժեշտ եր ամեն մի հեծվորի համար, վորովհետեւ պատե-  
րազմի ժամանակ նրանք պետք ե կովեյին նետ ու աղեղով, նի-  
շակով, սրով՝ ոգտագործելով վահանը, պարսատիկով, տեղով և  
այլն: Կովի այս բոլոր զենքերը գործադրվում են յերկու ձեռքի  
միջոցով:

Զիարշավի մրցումների ժամանակ մրցուղները ցույց եյին  
տալիս ուժի, արագության և ճարպկության բազմատեսակ փոր-  
ձեր: Որինակ, արագ քշելու ժամանակ Ճիավորը ցատկում եր գե-  
տին և կրկես թուչում ձիու մեջքին, կամ արշավի ժամանակ  
կուանում եր, գետնից իրեր վերցնում, և նման բազմաթիվ վար-  
ժություններ եր կատարում:

Թովմա Արծրունին նկարագրում է գնդակախաղի մի տե-  
սակ, վորը խաղում եյին Ճիավորները Ճիարշավի ժամանակ նա  
ասում ե՝ «Խաղս Ճիբնթացիկ արշաւանաց գնդակացն»:

Պետք ե յենթադրել վոր այս խաղի ժամանակ Ճիավորի  
նպատակն ե յեղեւ արշավի պայմաններում վորեւ զենքով (նետով,  
նիզակով, մականով) խփել գնդակին: Այս խաղի նպատակը այն  
է յեղեւ վոր նրանք ձգտում եյին պատրաստել այնպիսի հեծ-

յալներ, վորոնք կարողանային ձիբնթացի պայմաններում գոյություն ունեցող զենքերով հարվածել հակառակորդին:

Շատ բնական եք, վոր այդ վարժությունները պետք եւ համապատասխանելին իրենց ժամանակի հեծելազորի ունեցած զենքերի գործածությանը:

Գոշի վկայությամբ հայտնի յե, վոր մրցումների ժամանակ յերբեմն ճարպիկ ձիավարժի յերիվարը արձակ թողնում եյին հրապարակի մեջ, իսկ հանդիսականները խրանեցնում եյին ձիուն, ձիավորը կարողանում եր համեմել և ցատկել ձիու մեջքին:

Հայ պատմիչները յերբեմն խոսում են առանձին իշխանների, նախարարների նշանավոր ձիերի մասին և ցույց են տալիս հայերի հմտությունը ձի ընտրելու և խնամելու մեջ:

«Սասունցի Դավիթ» եպոսի մեջ նույնական հիշվում են «Մհերի տան ձիերը» կամ «Զոջանց տան ձիերը»:

Հայերի մոտ առանձնապես հարդի յեն յեղել սև ձիերը: Պատահական չե, վոր եպոսի մեջ «Սևուն» ե, վոր փորը գետին չի տալիս և մի ակնթարթում Ձենով Ոհանին հասցնում ե Դավիթի կովկին:

Եև ձիերը գովարանվում եյին Գողթան յերգիչների կողմից.

«Սեաւն քանց գիշեր, արագավաղ ու ահեղ քանց փութորիկ»:

Նույն յերգիչները յերգում եյին Արտաշեսին, վորը հեծած եր «Ի սեաւն գեղեցիկ» և այդ ձին թռչում եր՝ «որպէս զարծուի սրաթեւ ընդ գետն»:

Լավ ձիավորը լավ ձի յեր բուծում. յեթե կար այնպիսի ձիավոր, վորը կարողանում եր՝ «նման թռչուց յերիվարն հեծածէր», ապա կար և այնպիսի ձի՝ «թեթեւ առաւել քան զՊիզասոս, երագութեամբ անբաւ, զորս ոչ երկրակոխս, այլ օդազաց համարէին»:

Ահա թե ինչպես են գնահատում մեր պատմիչները լավ այրուձիուն:

Միջնադարի հայ պատանիներն ու յերիտասարդները վարժվում եյին բազմաթիվ խաղերի և մարզանքների միջոցով: Նրանք կոլեկտիվ մարզանքներ են ունեցել՝ «Բազում շարք մարզանաց» կամ «Խմբովի մարզանք»:

Հիշատակվում են մարզանքների և խաղերի այսպիսի առունեներ՝ հասելվառիկ, պահմտոցիկ, վագ կամ վազք, ծանրաբար-

ձություն (ծանր իրերի վերցնել կամ ծանր ատլետիկա), լող, ըմբշամարտ կամ ըմբշամարտ կոփի, ըմբշական մրցություն, գիրկ-ընդիսառն կոփի, վորին հետագայում տառւմ եյին կոխ, գյուլաշ և այլն:

Այսուհետև կար կովամարտիկ կամ բռնամարտիկ, ուրիշ խոսքով ասած բռունցքամարտ, զա մի տեսակ բռքսախաղ եր, առանց հատուկ ձեռնոցների, և այդ խաղը վորոշ կանոններով չեր սահմանափակում մրցողների շարժումներն ու հարվածները:

Հայերի մեջ շատ տարածված եր «արշավան» կոչված խաղը, իսկ վոմանք այդ խաղը անվանում են՝ արշավանք, ընթաց, ընթացություն և այլն:

Այս խաղն արտահայտվում եր վազքով՝ յերկար տարածություն անցնել տոկուն վազքով և կարճ տարածություն կտրել արագ վազքով:

Այս խաղի գոյությունը հետաքրքիր վկայությամբ հաստատում ե պատմիչ Հովհ. կթ. (10-րդ դար), նա գովում ե Սմբատի վորդի Աշոտին, վորը հայտնի յե յեղել վորպիս «մրցող արագվաղի»: Աշոտի մասին պատմիչը գրում ե.

«Բազում ընթացութիւնս և նահատակութիւնս քաջութեանց ուժեղակ մրցութեամբ ցուցանէր»:

Ֆիզիկական վարժությունների մրցությունները հայերի մոտ կենցաղային բնույթ եյին կրում: Սրանք տեղի եյին ունենուածների, հարսանիքների ժամանակ և բազմաթիվ այլ առիթներով:

Վազքի մրցության բազմաթիվ ձևերի մասին ունի վկայություն և Մ. Գոշը: Գոշի «Դատաստանագրքի» մեջ կա տեղեկություն, վոր հայ մանուկները «գրաւ» կգային իրար հետ՝

«Ի բարձանց ի խոնար վազել», կամ «Բնդ դժուարս և ընդ ձիւնս և ընդ այլ ինչ այսպիսիս գնալ»:

Կիլիկիայի որինագիրքը նախատեսնում եր տուգանք պատիժ այն մարդկանց նկատմամբ, վորոնք խախտում են խաղի կանոնները, կամ չափազանցություններ են մտցնում խաղի մեջ:

Այդ որինագրքում ասվում ե, տուգանել նրանց, վորոնք՝ «ի բարձր տեղաց ի վայր վազելու» կարգը կխախտեն:

Այս բոլոր վկայությունները ցույց են տալիս վազքի վարժությունների և մրցությունների բազմատեսակությունը՝ մի կող-

մից, և մյուս կողմից՝ վարդի վարժությունների մասսայական բնույթն ու նրանց տեղի հայերի ֆիզիկական դաստիարակության սխտեմում

Մարզական մրցությունները տեղի եյին ունենում շատ կազմակերպված: Մի խումբ մարզիչներից կազմվում եր մրցողներին գնաճատող հատուկ հանձնաժողով, վորը ունենում եր իր դեկավարը, վարպետը, կամ հանձնաժողովի նախագահը, սա կոչվում եր «մարտադիր» կամ «հանդեսապետ»: Վերջինիս հրամանով կարող եր սկսվել մրցումները. սա եր գնաճատում մրցողներին, հազմողին հանձնում եր պսակը կամ նվերները, դադարեցնում եր մրցումները, յեթե կարգի խախտում եր տեղի ունենում և այն: Մրցության մեջ հաղթող մարզիկը ստանում եր նվերներ և պսակներ: Հաղթության դեպքում մարտադիրը պսակը ձեռքին մոտենում եր մարզիկին և կարճ դովասանական խոսքերից հետո հանձնում եր պսակը:

Մարզիս Մեկնիչը (12-րդ դար) հիշում ե, վոր հաղթողը մուտենում եր մարտադիրին և հապարտությամբ, ինչպես ինքն և ասում՝ «բարձրագույն զպսակն պահանջիցէ», իսկ պարտվողի վիճակը, ինչպես վկայում ե Կողբացին, մահու պատժից ել վաստ յեղել:

Ծանրաբարձությունը կամ ծանր իրեր վերցնելը հին և միշտին դարերում հայերի մեջ շատ տարածված մարզական վարժություններից մեկն եր: Յերեմի այդ մրցության մոլի հետեւողները սեկորզներ սահմանելու նպատակով չափաղանց ծանր իրեր եյին վերցնում, այդ պատճառով մրցությունը վերջանում եր տխուր հետևանքներով:

Այդ մասին Մ. Գոշը գրում է՝

«Սովոր են երիտասարդք վայրապար զմիմեանս շարժել՝ բառնալ ինչ ծանունս, որպէս քարինս և այն այսպիսիս»:

Շատ անգամ պատճում եյին մարդկանց՝ «ի պատճառս վայրապար գրաւուց». տուզանում եյին մրցության մեջ վնասող չափաղանցություններ մտցնողներին:

Մրցան հրավիրողը ինքն եր սահմանում վերցվող իրերի քաշը՝ «Եթե գրաւով ծանտր իրք վերցնեն կամ ուժփորձուկ այսնեն...» հատկապես անչափահամերի, շատ յերիտասարդների նկատմամբ, այդ դեպքում ևս հրավիրողը պատճվում եր, իսկ վնասա-

ների դիրաց գրամով եր հատուցում, ըստ կիլիկիայի որինագրքի:

Ծանրաբարձության կամ ծանր իրեր վերցնելու վարժության մասին հայոց պատմության մեջ կան բազմաթիվ հիշատակություններ: Հիշվում են առանձին անձնավորություններ, մարզված մարդիկ, վորոնք անուելի ուժ են ունեցել և նրանք հոչակվել են վոչ միայն հայերի շրջանում, այլև ոլիմպիադայում—հույն մարզիկների մեջ: Մարզական բազմաթիվ տեսակի վարժությունները խթան են հանդիսացել մարմնի բազմակողմանի մարզմանը, այլ խոսքով ասած՝ այս բոլորը նպաստել են մարմնի հարմոնիկ դարպացմանը:

Վերը հիշված մարմնամարզության և սպորտի տարրեր տեսակներն ու ձեվերը ցույց են տալիս, վոր հայերը մարզում եյին իրենց մկանները, ձեռքերն ու վորքերը, ձեռք եյին բերում արագաշարժություն, ձկունություն, տոկունություն և ուժ: Այս բոլորը հիմք եր հանդիսանում նրանց դառնալու լավ ձիավորներ, նետաձիններ, նիզակակիրներ, ծանրաբարձներ, վազողներ, թըռչողներ և այլն:

Մինք ասինք, վոր մեր պատմիչները հիշում են շատ մարդկանց, վորոնք բազմակողմանիորեն մարզված են յեղել:

Պորենացին գրում է, վոր Վարազգատը՝ «վազեաց զեփրատաւ առաւել քան զզակոնացին թիոնեայ վազմն քսան և երկուց կանգնոց չափակ<sup>1)</sup>, այդ յերեսույթը, ասում ե հեղինակը, հիշեցրեց Աքիլլեսին Սկամանդրոս գետի վրայով թոչելիս: Նույն հեղինակը հիշում ե Վարազգատին, վորպես առյօւններ սպանողի, ոլիմպիադայում հույն ըմբիշների կողմից հարգված ուժի տեր մարդու և քաջ նետաձգի (Խոր. Գ. Խ.):

Սերեսուը հիշում է Սմբատ Բագրատունուն, վորպես լավ մարզված և անագին ուժի տեր մարդու: Այս Սմբատը ձիու վրա նստած, կառչում է ծառի հաստ ճյուղից, վոտներով պինդ բռնում ե ձիու իրանից և ձգվում ե գեպի վեր, գետնից պոկելով ձիուն: Այս արտակարգ յերեսույթից, ինչպես վկայում է Սերեսուը, ամենքը՝ «անարեկ լինէին ի զարմացմանէ»: Կասկած չկա, վոր այս նկարագրությունների մեջ չափաղանցություններ կան, բայց դրանք չեն ժիտում, ընդհակառակը՝ հաստատում են հին հայերի

<sup>1)</sup> Քսաննյերկու կանգունը հույնների մոտ թոփչքի նախատեսնված ունկորդային ամենաբարձր չափն եր:

ֆիզիկական գաստիարակության բարդ և բազմակողմանի լինելու հանգամանքը:

Ապացույցներից մեկն ել կարող ե լինել այն, վոր հայերը ունենալով ֆիզիկական վարժությունների հատուկ ձեվեր ու յեղանակներ, սրանց ուսուցման առանձին պայմաններ, միաժամանակ՝ ունեցին մրցման հատուկ կանոններ:

Որինակ՝ յեթե մրցողները ծանրություն պիտի վերջնեն, նրանք հաշվի յեն առնում մրցողների քաշն ու հասակը, նույնը վաղքի ժամանակ, այս գեպքում չափվում եր նաև վազողների սրունքները։ Հովհաննես պատմիչը վկայում է, վոր Աշոտը ասպարեզի վրա, մրցությունից առաջ համեմատվում և չափվում եր իր մրցակիցների հետ։ «Որք կենօք և աւուրբք զուգահաւասար նմա էին», ասում ե պատմիչը։

Մեր կողմից հիշատակված բոլոր փաստերն ու վկայությունները ցույց են տալիս, վոր ինչպես մտավոր կրթությունը հայերի մոտ տարվում եր վորոշ ուղղությամբ, ուսումնական զանազան վայրերում համապատասխան ծրագրերով, այնպես ել գիրկական գաստիարակությունը մի շարք վայրերում ունեցել և հանդիսական կազմակերպված բնույթ։ Ինչպես Հ. Սարկավագն և ասում՝ ֆիզիկապես վարժեցնում եյին մարդկանց մանկությունից, սովորեցնում եյին՝ «խրատու», «արուեստապես», սպորտի և զինավարժության բոլոր տեսակները հատուկ ձևերով ու մեթոդներով։

Հայերի ֆիզիկական գաստիարակության և զինավարժության արտահայտությունները խիստ ակնառու յեն «Սասունցի Դավիթ» եպոսի մեջ։ Հմուտ, վարժված ձեմավորներ են՝ մեծ և փոքր Մհերները, Դավիթը, Սանասարն ու Բաղդասարը, Զենով Ոհանը, քեռի Թորոսը և ուրիշները։ Սրանք մարզված, վիթխարի ուժի տեր մարդիկ են, վորոնք գետեն ամենակատարյալ կերպով գործադրել իրենց ժամանակի բոլոր գենքերը՝ նետն ու աղեղը, պարսատեկը, տեգը, մկոնդը, նիզակը և սուրն ու վահանը։

Եպոսի մեջ հիշվում ե, թե ինչպես «Զոջանց տան» մեծն ու պատիկը վարժված են յեղել զենքերին, պահել են լավ ձիեր ու վարժվել նրանցով, նրանց կենցաղի մեջ և մտել ֆիզիկական գաստիարակությունը։ Եպոսում հիշվում է, վոր Մհերն ու Դավագիթը սովորություն են ունեցել կովից առաջ իրենց սրերը պողակատե սյունի վրա փորձել. առասպելացած այդ սյունը ուրիշ

բան չեր, քան այն ձողը, վոր վարժության ժամանակ նրանք կտրում եյին սրերով։

Հոյակասղ ձեմավորի և սրախաղացի պատկեր ե հանդիսանում Դավիթը։ Մանուկ հասակից գանարած լինելով՝ նա զբաղվում էր վորսորդությամբ, չջոկելով իրարից ուլն ու նապաստակը, գառն ու աղվեսը։

\* \* \*

Հին հայերի մտավոր և ֆիզիկական դաստիարակության մասին բազմաթիվ ուրիշ տվյալներ ու վկայություններ կան անցյալ գրականության մեջ, մեր պատմիչների ու հիշատակագիրների մոտ, մեր ձեռագրատանը, պարբերական մամուլում և արխիվներում։

Այս բոլորը կարուտ են ուսումնասիրության, վերամշակման և, վոր հիմնականն ե, իրենց մարքսիստական լուսաբանությանը։



Պատմմքագիր՝ Մ. Ս ա ն թ բ ո ս յ ա ն  
Սրբագրիչ՝ Մ. Հ ա ն ո գ ա ր յ ա ն  
Հանձնված և արտադրության 16/VIII  
Ստորագրված և տպագրության 25/X  
Գլավիտի լիազոր № Ն. 2904, պատվեր 693, տիրաժ 1000

Պետական Համալսարանի Հրատարակչության տպարան, Յերեվան

ՀՀ Ազգային գրադարան



NL0227313

44. 673

ԳԻՒԾ 1 ՈՂԵՔ. 30 ԿՈԹ.

Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

**ОЧЕРК ОБ ОБРАЗОВАНИИ  
ДРЕВНИХ АРМЯН**

На армянском языке

ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО ГОСУНТА